

**ՀՀ Արագածոտն մարզի Աշտարակ քաղաքի Սուրբ
Սարգսի փողոց N 73/6-73/8 հասցեում Բազմաբնակարան
բնակելի շենքերով բնակելի թաղամասի և
հասարակական օբյեկտների կառուցում**

**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ
/ԼՐԱՄՇԱԿՎԱԾ/**

**Ձեռնարկող՝
«ԱՍՏՂԻԿ 21» ՓԲԸ**

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	5
2.ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏ, ԲՆԱԳԱՎԱՌԻ ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ԱԿՏԵՐ	6
3.ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ	10
4.ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԲՆԱՌԵՍՈՒՐՄՆԵՐ և ՆՅՈՒԹԵՐ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ և ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ)	12
4.1 Գոյություն ունեցող իրավիճակը	12
4.2 Ճարտարապետական և տեխնոլոգիական լուծումներ	12
4.3 Ջրամատակարարում և ջրահեռացում	26
4.4 Կանաչապատում և բարեկարգում	27
4.5 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում	27
5 ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ	28
5.1 Տարածքի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները	28
5.2 Կլիմա	28
5.3 Տարածքի ինժեներա-երկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանները	30
5.4 Տարածքի սեյսմիկ բնութագիրը	31
5.5 Մթնոլորտային օդ	31
5.6 Ջրային ռեսուրսներ	32
5.7 Հողային ռեսուրսներ	33
5.8 Կենսաբազմազանություն	34
5.8.1 Բուսական աշխարհ _____	34
5.8.2. Կենդանական աշխարհ _____	34
5.8.3. Բնության հատուկ պահպանվող տարածքներ _____	35
5.9 Պատմության և մշակութային հուշարձաններ	35
5.10 Մոցիալ տնտեսական պայմանները	45
6 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	46
6.1 Ռիսկերի գնահատում	46
6.2 Օդի աղտոտում	46
6.3 Հողերի Աղտոտում	48
6.4 Աղմուկի և թոթոռումների ազդեցություն	49
6.5 Արտակարգ իրավիճակներ.	50
6.6 Ջրօգտագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն	51
6.7 Կենսաբազմազանություն	54
6.8 Թափոններ	54

6.9 Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն	56
6.10 Էներգախնայողություն և Էներգաարդյունավետություն	58
6.11 Պատմամշակութային և բնության հուշարձաններ	60
6.12 Սոցիալական ազդեցություններ	60
6.13 Լանդշաֆտ	61
6.14 Բարեկարգում և Կանաչապատում.	61
7 ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ և ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ	67
8 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ	68
9 ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆՐԻ/ ՊԼԱՆ	72
10 ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	74
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ	76
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵՅԻ ԿՈՂՄԻՑ ՏՐՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ	80
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾՍՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ	81
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՔԱՆԴՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ	85
ՀԱՎԵԼՎԱԾ 5. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ	87
ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆ	89
ՀԱՎԵԼՎԱԾ 7. ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆ	92
ՀԱՎԵԼՎԱԾ 8. ԳԱԶԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆ	93
ՀԱՎԵԼՎԱԾ 9. ԿԱՆԱԶԱՊԱՏՄԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ ԵՎ ՄԽԵՄԱ	97
ՀԱՎԵԼՎԱԾ 10. ԱՐԱԳԱԾՈՏՆ ԶՕԸ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆ	101
ՀԱՎԵԼՎԱԾ 11. «ԱՍՏՂԻԿ 21» ՓԲԸ ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՄՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՔԱՂՎԱԾՔ	102
ՀԱՎԵԼՎԱԾ 12. Հայաստանի Էլեկտրական Ցանցեր Գրություն/Պարզաբանում	104
ՀԱՎԵԼՎԱԾ 13. ՆԱՄԱԿ/ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ	105

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Նախատեսվող գործունեություն	ՀՀ Արագածոտն մարզի Աշտարակ քաղաքի Սուրբ Սարգսի փողոց N 73/6-73/8 հասցեում Բազմաբնակարան բնակելի շենքերով բնակելի թաղամասի և հասարակական օբյեկտների կառուցում
Նպատակը	Բազմաբնակարան բնակելի շենքերով և բնակելի թաղամասի և հասարակական օբյեկտների կառուցում
Ձեռնարկող	«Աստղիկ 21» ՓԲԸ
Կառուցապատող	«Աստղիկ 21» ՓԲԸ
Ձեռնարկողի հասցե	ՀՀ, ք. Երևան, Ֆուչիկի փողոց 6/1
Ձեռնարկողի կոնտակտային տվյալներ, էլ փոստ, հեռախոս	Հեռ. +374 55 03 03 92, Էլ. Փոստ: maximghardyan@gmail.com
Կառուցապատվող տարածքի գտնվելու վայրը	ՀՀ Արագածոտն մարզի Աշտարակ քաղաքի Սուրբ Սարգսի փողոց N 73/6-73/8 հասցե
Կառուցապատվող հողամասի ընդհանուր մակերեսը	3.09123 հա; 30912.3 քմ
բնակելի համալիրի կառուցապատման մակերես	Կառուցվող շինությունների զբաղեցված մակերեսը` 7280.0 մ ²

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն նախնական գնահատման հայտում ներկայացված նախատեսվող գործունեության ձեռնարկող է հանդիսանում «Աստղիկ 21» ՓԲ ընկերությունը, իրավաբանական հասցե՝ ք.Երևան, Ֆուչիկի փողոց 6/1: Գործունեության իրականացման վայրը՝ ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքի Սուրբ Սարգսի փողոց N 73/6-73/8 հասցե:

«Աստղիկ 21» ՓԲ ընկերության կողմից ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքի Սուրբ Սարգսի փողոց N 73/6-73/8 հասցեում՝ 3,09123 հա հողակտորի վրա նախատեսվում է կառուցել բազմաբնակարան բնակելի շենքերով բնակելի թաղամաս և հասարակական օբյեկտներ:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (21 հունիսի, 2014) հոդված 14-ի կետ 6-ի համաձայն, նախատեսվող գործունեության նախագծային փաստաթուղթը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման և փորձաքննության, քանի որ ընդհանուր կառուցապատվող տարածքի մակերեսը գերազանցում է 1500 մ²-ը:

Ելնելով շրջակա միջավայրի վրա ազդեցության աստիճանից, նախատեսվող գործունեությունը դասակարգվում է «Գ» կատեգորիայի, որի համար պահանջվում է Նախնական գնահատման հայտի պատրաստում: Նախնական գնահատման հայտի բովանդակությունը մշակվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտը կարգավորող իրավական ակտերի պահանջների համաձայն:

Գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների գնահատման և վերլուծության արդյունքներն ամփոփվել են սույն նախնական գնահատման հայտում: Գնահատման նպատակն է նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի ու մարդու առողջության վրա հնարավոր վնասակար ազդեցությունների կանխատեսումը, կանխարգելումը, նվազեցումը կամ բացառումը:

Գործունեության իրականացման ընթացքում հիմնական բնապահպանական և սոցիալական ռիսկերն են՝

- Օդային ավազանի աղտոտում՝ շինարարական աշխատանքների և շինարարական տեխնիկայի շարժիչների շահագործման ընթացքում,
- Շինարարության փուլում մոտակա բնակչությանը (Աշտարակ քաղաքի Սուրբ Սարգսի փողոց N 73/6-73/8 հասցեի մոտակա բնակչություն) պատճառվող անհանգստություն՝ մեքենաների և տեխնիկայի տեղաշարժից,
- Շինարարական մեքենաների և տեխնիկայի աշխատանքով պայմանավորված տեղի երթևեկության խափանում,
- Հողերի դեգրադացիա և էրոզիա բուսածածկի վնասման արդյունքում,

Հողերի և ջրային ռեսուրսների աղտոտում շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում առաջացող արտահոսքերով,

- Հողերի աղտոտում՝ շինարարության և շահագործման ընթացքում առաջացող թափոններով՝ շինարարական և կենցաղային աղբով,

- Աշխատողների առողջությանը հասցվող վնաս՝ գործունեության իրականացման շինարարության և շահագործման ընթացքում:

Հայտում բնապահպանական ելակետային տվյալների հիման վրա առաջարկվել և ամփոփվել են վերը նշված ազդեցությունների և շրջակա միջավայրի մյուս բաղադրիչների վրա կանխարգելմանը և նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր:

Նախնական գնահատման հայտի մշակման համար օգտագործվել են հետևյալ տեղեկատվական աղբյուրները.

- Նախատեսվող գործունեության աշխատանքային նախագիծը,
- Նախատեսվող գործունեության ընթացքում հավաքագրված տվյալներն ու տեղեկատվությունը,
- Տարածքի վերաբերյալ վերլուծությունները, սխեմաները,
- Շահագրգիռ կողմերի հետ հանդիպումներն ու քննարկումները:

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման փուլում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- Աշխատանքային նախագծի հիման վրա նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի մշակում,
- Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկումների անցկացում,
- Բնապահպանական փորձաքննության նպատակով նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի և հանրային քննարկումների արդյունքների (ներառյալ՝ արձանագրություն, մասնակիցների ցանկ տեսաձայնագրություն) ներկայացում շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ:

ՀՀ գործող օրենսդրությունը պահանջում է նախատեսվող գործունեության համար իրականացնել հանրության տեղեկացում և քննարկումներ նախագծման, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման, փորձաքննության փուլերում:

2. ՕՐԵՆՍԴԻՐԱԿԱՆ ԴԱՇՏ, ԲՆԱԳԱՎԱՌԻ ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ԱԿՏԵՐ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերից, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության

գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից և նրանից բխող ենթաօրենսդրական ակտերից, բնապահպանական ոլորտին առնչվող ավելի քան 30 ՀՀ օրենքներից, ինչպես նաև իրավական այլ ակտերից:

«Աստղիկ 21» ՓԲ ընկերությունը բազմաբնակարան բնակելի շենքերով բնակելի թաղամասի և հասարակական օբյեկտներ կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են բնապահպանական ոլորտին առնչվող օրենսգրքերում և իրավական ակտերում: Քաղաքաշինության ոլորտի համար առավել կիրառելի ազգային բնապահպանական քաղաքականությունները և օրենսդրական կարգավորիչ հիմքերը ներկայացված են ստորև.

ՀՀ Սահմանադրություն (ընդունված 06.12.2015թ.) – 12-րդ հոդվածը «Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը» սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության, բարելավման, վերականգնման, բնական պաշարների բանական օգտագործման վերաբերյալ՝ հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014) - Օրենքով սահմանվում են ընդհանուր իրավական, տնտեսական և կազմակերպական սկզբունքներ, որոնք նախատեսված են տարբեր ծրագրերի և ճյուղային զարգացման “հայեցակարգերի” պարտադիր անցկացվող ՇՄԱԳ-ի իրականացման և փորձագիտական եզրակացության տրման համար: Համաձայն՝ “Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին” ՀՀ օրենքի, 14-րդ հոդվածով սահմանված են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա հիմնադրությային փաստաթղթերը և նախատեսվող գործունեության տեսակները: Յուրաքանչյուր նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում, որը կարող է ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, ենթակա է բնապահպանական փորձաքննության: Շրջակա միջավայրի վրա ազդեցության ենթակա նախատեսվող գործունեության տեսակներն՝ ըստ բնագավառների դասակարգվում են երեք կատեգորիայի՝ «Ա», «Բ», «Գ», ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Օրենքը հստակեցնում է ծանուցման, փաստաթղթավորման, հանրային խորհրդատվությունների և բողոքարկման ընթացակարգերը:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ընդունված 10.11.1994թ. ՀՕ 121) - կարգավորում է մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազման ու կանխման բնագավառում հասարակական

հարաբերությունների հարցերը: Մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների պետական հաշվառման, ինչպես նաև մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների մշակման և հաստատման վերաբերյալ հարցերը կարգավորվում են օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերով՝ ՀՀ կառավարության 22.04.1999թ. N 259 և 27.12.2012թ. N 1673-Ն որոշումներով:

«ՀՀ հողային օրենսգիրք» (2001) - սահմանում է պետական, այդ թվում՝ տարբեր նպատակային նշանակության (գյուղատնտեսական, շինարարական, արդյունաբերական և այլ նպատակներով) հողերի օգտագործման դրույթները: Օրենսգիրքը սահմանում է նաև հողերի պահպանությանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև հողի նկատմամբ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների ունեցած իրավունքները:

«Հողօգտագործման և պահպանման վերահսկողության մասին» ՀՀ օրենքը (2008թ) - նախատեսում է ՀՀ հողերի պահպանության և արդյունավետ օգտագործման խնդիրներն ու ձևերը, սահմանում է հողային օրենսդրության և կառույցների նկատմամբ վերահսկողություն, հողերի օգտագործումն ու պահպանությունը հսկող մարմինների իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ Հողային Ֆոնդի բոլոր հողերի վրա՝ անկախ նպատակից, սեփականության ձևից և/կամ օգտագործման իրավունքից:

«Թափոնների մասին» ՀՀ օրենք (2004) - սահմանում է թափոնների, այդ թվում շինարարական աղբի, հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման հետ կապված իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքով սահմանում են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները: ՀՀ Կառավարության 121-Ն որոշումը, որը վերաբերում է ՀՀ-ում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին (2003), պարունակում է դրույթներ ՀՀ-ում, այդ թվում քաղաքաշինության բնագավառում առաջացող բոլոր վտանգավոր թափոնների մասին:

«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2005) - կարգավորում է ՀՀ-ում բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման հետ կապված հարցերը և պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ, սահմանում ՀՀ բնապահպանական օրենսդրության նորմերի իրականացման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության իրավական և տնտեսական հիմքերը:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք (2000) - կարգավորում է տնտեսական գործունեության վերահսկողության ստուգայցերի իրականացման ընթացակարգերը:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998) - կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը (հոդվածներ 13, 14, 15, 16, Գլուխ 6):

Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

ՀՀ Քաղաքաշինության նախարարի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգը» (հրաման N 44, 28 ապրիլի, 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2013) պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

Բնապահպանական որակի ստանդարտները, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

Նախատեսվող գործունեության նախագծման և շինարարական աշխատանքների ընթացքում բացի վերոթվարկված ՀՀ օրենսդրությունից ստորև ներկայացվում են նաև սույն գործունեության հետ առնչվող մի շարք օրենքներ և որոշումներ

1. ՀՀ Ջրային օրենսգիրք (04.06.2002թ.)
2. ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշում “Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին”:
3. ՀՀ առողջապահության նախարարի 2012 թ. սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրաման «Կազմակերպություններում Աշխատողների Սանիտարակենցաղային Սենքերի» N 2.2.8-003-12 Սանիտարական Կանոնները և Նորմերը Հաստատելու Մասին:
4. ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 17-ի թիվ 79-Ն հրաման ՀՀՇՆ22-04-2014 «Պաշտպանություն աղմուկից» շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին:

5. «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006թ.),
6. «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.),
7. «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.),
8. ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշում,
9. ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշում,
10. ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշում,
11. «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 31.07.2014թ. N 781 որոշում;
12. «Բնակավայրերի կանաչ գոտիների չափերին և տեսակային կազմին ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 30.10.2008թ N 1318-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 08.02.2018թ. N 108 որոշում:

3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

Սույն նախնական գնահատման հայտում ներկայացված նախատեսվող գործունեության ձեռնարկող է հանդիսանում «Աստղիկ 21» ՓԲ ընկերությունը:

Նախատեսվող գործունեության անվանումն է՝ ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքի Սուրբ Սարգսի փողոց N 73/6-73/8 հասցեում բազմաբնակարան բնակելի շենքերով բնակելի թաղամասի և հասարակական օբյեկտների կառուցում:

Տարածքը սեփականության իրավունքով պատկանում է «Աստղիկ 21» ՓԲ ընկերությանը (Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը ներկայացված է **Հավելված 5-ում**): Տարածքի մակերեսը կազմում է 3.09123 հա: Հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, իսկ գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ խառը կառուցապատման:

Ներկայում տարածքում առկա են մի քանի կիսակառույց պարիսպներ և կիսակառույց շինություններ, որոնք ենթակա են քանդման:

Նկար 1. Բնակելի համալիրի իրադրային սխեմա



4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԲՆԱՌԵՍՈՒՐՄՆԵՐ և ՆՅՈՒԹԵՐ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ և ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ)

4.1 Գոյություն ունեցող իրավիճակը

Կառուցապատման ենթակա տարածքը գտնվում է ՀՀ Արագածոտնի մարզի, Աշտարակ քաղաքի, Սբ. Սարգսի փողոց 73/6-73/8 հասցում:

Տարածքում բնության և պատմամշակութային հուշարձաններ չկան: Մոտակայքում մոտավորապես 300 մ հեռավորության վրա գտնվում է Սբ. Սարգիս եկեղեցին:

Տարածքում առկա են մի քանի արտադրական և օժանդակ շինություններ, որոնց զգալի մասը գտնվում է կիսաքանդ վիճակում: Տարածքում առկա են մի քանի կիսակառույց շինություններ, որոնց բնութագրերը և մակերեսները բերված են ստորև ներկայացված **Աղյուսակ 1-ում**:

Աղյուսակ 1

Հ/Հ	Տեսակ	Մակերես
1	Կիսակառույց շինություն	785.12 քմ
2	Կիսակառույց շինություն	853.45 քմ
3	Կիսակառույց շինություն	10.98 քմ
4	Կիսակառույց շինություն	13.61 քմ
5	պարիսպ	26.2 քմ, 62.9 խ.մ.

4.2 Ճարտարապետական և տեխնոլոգիական լուծումներ

Բնակելի համալիրի նախագծի առաջարկը նախատեսված է Արագածոտնի մարզ, Աշտարակ քաղաքի, Սբ. Սարգսի փողոց 73/6-73/8 հասցեում բազմաբնակարան բնակելի շենքերով բնակելի թաղամասի և հասարակական օբյեկտների կառուցում: Կառուցապատվող տարածքին մոտեցումը կապահովվի Սբ. Սարգսի փողոցով:

Կառուցապատվող հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 3.09123 հա: Բնակելի համալիրի նախագիծը բաղկացած է 6 բնակելի շենքերից (Ա, Բ, Գ, Դ, Ե և Զ) որոնք ունեն 8-ից 12 հարկեր: Յուրաքանչյուր շենքի ստորգետնյա 2 հարկերում նախատեսված են ավտոկայանատեղիներ, առաջին և երկրորդ հարկերում՝ հասարակական տարածքներ և 3-րդ հարկից սկսվում են բնակելի տարածքները, որոնք ունեն յուրօրինակ ճարտարապետական լուծումներ: Բոլոր շենքերի առաջին 3 հարկերը և մնացած բնակելի հարկերը հասանելի են հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Կառուցապատման աշխատանքները իրականացվելու են 7280 քմ մակերեսում, որը բաղկացած է լինելու 6 մասնաշենքերից՝

Ա մասնաշենք՝	8 վերգետնյա հարկ,
Բ մասնաշենք՝	9 վերգետնյա հարկ,
Գ մասնաշենք՝	10 վերգետնյա հարկ,
Դ մասնաշենք՝	12 վերգետնյա հարկ,
Ե մասնաշենք՝	12 վերգետնյա հարկ,
Զ մասնաշենք՝	11 վերգետնյա հարկ:

Բնակելի և հասարակական շենքերով թաղամասի համար նախատեսվում է կառուցել ներքին ճանապարհային ցանց:

Թաղամասի տարածքում նախատեսված է անհրաժեշտ սպասարկման հաստատություններ, այդ թվում՝ հասարակական սննդի, առևտրի, կենցաղային սպասարկման, մարզական և այլն:

Ընդհանուր թաղամասի ներսում նախատեսված են կանաչ գոտի և մանկական խաղահրապարակ:

Բնակելի համալիրը նախատեսվում է մոտ 2000 բնակչի համար:

Կառուցապատման տոկոսը կազմում է 30.3 %, կանաչապատմանը՝ 50.44 %:

Բնակելի շենքերի դասավորությունը պայմանավորված է հողամասի դիրքով, լանդշաֆտի առանձնահատկություններով, հեռավորությունների նորմատիվ պահանջներով, բնական լուսավորության հաշվարկներով:

Կոնստրուկտիվ լուծումների տեսանկյունից բնակելի մասնաշենքերը նախատեսվում են միաձույլ երկաթ/բետոնե (ե/բ) շրջանակային հիմնակմախքի իրականացմամբ, ներառյալ՝ շենքի հիմքերը, սյուները, հեծանները և միջհարկային սալերը:

Արտաքին պատերը առաջին և երկրորդ հարկերի համար նախատեսվում են իրականացվել պեմզաբլոկներով, արտաքինից երեսապատումը բազալտե և սև տուֆե սալերով, իսկ երրորդ հարկից վերև նախատեսվում են իրականացվել պեմզաբլոկներով, արտաքինից էքստրուդացված պոլիստիրոլի մեկուսացում, սվաղ և ներկով:

Ներքին պատերը նախատեսվում են իրականացվել գիպսաստվարաթուղթ:

Տանիքը՝ հարթ և կազմակերպված ջրահեռացումով, այնպիսի հաշվարկով, որ հնարավոր լինի հետագայում կազմակերպել կանաչ տարածք:

Հատակները նախատեսվում է կառուցել բոլոր միջհատակային հաղորդագծերը տեղադրելուց հետո:

Օդորակման համակարգերը տեղադրվելու են պատշգամբներում հատուկ առանձնացված տարածքներում:

Բնակարանների խոհանոցների, լոգարանների օդափոխությունը կատարվում է բնական եղանակով հատուկ նախատեսված հորանների միջոցով, որոնք բարձրանում են դեպի տանիք:

Բնակելի շենքի արտաքին պատերը նախատեսվում է իրականացնել մեկ շարք (200 մմ հաստությամբ) ամրանավորված պեմզաբլոկներով: Էներգոարդյունավետության և ջերմամեկուսացման տեխնիկական լուծումների նպատակով բոլոր պատերը արտաքինից կջերմամեկուսացվեն (100 մմ հաստությամբ) էքստրուդացված պոլիստիրոլ ջերմամեկուսիչ սալերով և կերեսապատվեն սվաղով և ներկով:

Բնակելի շենքերի բոլոր հարկերի միջանցքներում նախատեսվում են առանձնացված հորաններ՝ ինժեներական ցանցերի (ջրամատակարարում, ծխահեռացում, էլեկտրասնուցում) իրականացման համար:

Բնակելի հարկերի ընդհանուր օգտագործման միջանցքները սարքավորված կլինեն ծխահեռացման համակարգով: Բնակարաններում նախատեսված են ինքնաշխատ ծխային հրդեհային ազդարարման սարքեր: Միջանցքներից ծխահեռացմանը նախատեսվում է իրականացնել մեկ ժամից ոչ պակաս հրակայունության սահման ունեցող նյութերից պատրաստված հատուկ հորաններով, ծխի հարկադիր արտածումով, ինչը կատարվում է բոլոր հարկերում տեղադրված ծխահեռացման կափույրների միջոցով:

Շենքերի բոլոր բացվածքները դեպի պատշգամբ նախատեսվում է իրականացնել հրակայուն ապակիներից և շրջանակներից: Շենքերում նախատեսվում է փոքր վերելակ, և բեռնատար վերելակ: Աստիճանավանդակների դռները կունենան ինքնափակման համակարգ, իսկ ավտոհանգրվանի հարկերը միմյանցից առանձնացված կլինեն ինքնաշխատ դարպասներով: Մեքենաների մուտքը ստորգետնյա ավտոկայանատեղի նախատեսված է երկկողմանի՝ բաց թեքահարթակներով, լուսացույցային կարգավորումով: Նախագծային լուծումներում հաշվի են առնված նաև սակավաշարժ խմբերի համար հարմարեցված թեքահարթակները՝ արտաքին մուտքերում:

Ստորգետնյա ավտոկայանատեղիների օդափոխությունը նախատեսված է իրականացնել ՀՀ նորմերին համապատասխան, համաձայն որի օդափոխությունն նախատեսվում է ապահովել ուղղահայաց հորանների միջոցով որը բարձրանում է յուրաքանչյուր շենքի ստորգետնյա հարկերից մինչև տանիք: Օդափոխությունը

կարգավորվելու է տանիքում տեղադրվող օդափոխիչ սարքերի միջոցով, որն օդը բարձրացնելու է դեպի վերև մետաղյա թիթեղներով պատրաստված ուղղանկյուն խողովակների միջոցով: Օդափոխման համակարգերի աղմուկի նվազեցման համար օդափոխման խողովակները պատվելու են ձայնամեկուսիչ նյութով: Ստորգետնյա հարկերում ջեռուցում չի նախատեսվում:

Համալիրի տարածքում նախատեսվում են տեղադրել կենցաղային աղբի հավաքման համար նախատեսվող աղբամաններ, որոնց տեղադրման տեղերը կձևավորեն Աշտարակի քաղաքապետարանի հետ:

Նախագծով նախատեսված է արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության համապատասխան միջոցառումներ:

Կառույցում նախատեսված է նաև հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի համար տեղաշարժվելու անհրաժեշտ պայմաններ:

Շենքերի սեյսմազինվածության մակարդակը նախատեսված սեյսմիկ - III գոտու համար (9 Բալ և ավելի) համաձայն ՀՀՇՆ 20.04- երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր»-ի՝ գործունեության տարածքը գտնվում է սեյսմիկ առաջին գոտում, գրունտների հնարավոր սեյսմիկ արագացումը կազմում է $A_{max} = 0.3g$, 8-9 բալ երկրաշարժերի առավելագույն հզորությամբ:

Բնակելի թաղամասի արտաքին ինժեներական ցանցերի համար մշակվելու են վերջնական նախագծերը /ջրամատակարարում, ջրահեռացում, էլեկտրամատակարարում, գազամատակարարում/ նշված ծառայությունները մատուցող կազմակերպությունների կողմից տրամադրած տեխնիկական պայմանների համաձայն (**Հավելվածներ 6-8**):

Տարածքում գոյություն ունեն կիսակառույց պարիսպներ: Նախագծի առաջին փուլում նախատեսվում է քանդել պարիսպի աջ հատվածը (որի քանդման թույլտվությունը կցվում է, տես **Հավելված 4**) իսկ ձախ հատվածը նախատեսվում է պահպանել և վերակառուցել:

Նախագիծը մշակված է համաձայն ՀՀ տարածքում գործող հետևյալ նորմատիվային փաստաթղթերի՝

(Ա - Բ) շենքերը նախատեսվում են կառուցել շինարարության մեկնարկից երեք տարվա ընթացքում, իսկ (Գ - Դ - Ե - Զ) շենքերը նախատեսվում են կառուցել շինարարության մեկնարկից վեց տարվա ընթացքում: Ըստ նշված բնութագրի ՍՆԻՊ 1.04.03-2008-ի նորմատիվներով նշված աշխատանքների իրականացումը հաշվարկված է 6 տարի, կամ 72 ամիս շինարարության տևողություն:

ՀՀՇՆ 20.04 _ «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր»

ՀՀԿՀ 23-101-2017 «Բնակչության սակավաշարժ խմբերի եվ հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի եվ շինությունների մատչելիության ապահովման նախագծման կանոնների հավազածուն հավանություն տալու մասին»

ՀՀՇՆ 30-01-2014 քաղաքաշինություն. քաղաքային եվ գյուղական բնակավայրերի հատակագծում եվ կառուցապատում

ՀՀՇՆ 31-01-2014 Բնակելի շենքեր. Մաս 1. Բազմաբնակարան Բնակելի Շենքեր

ՀՀՇՆ 21-01-2014 Շենքերի Եվ Շինությունների Հրդեհային Անվտանգություն

ՀՀՇՆ Iv-11.03.03-02 Ավտոկայանատեղեր

Շինարարական աշխատանքները պետք է իրականացվեն համաձայն շննկ III-4-80* «Անվտանգության տեխնիկական շինարարության մեջ»:

Կառուցապատման վերաբերյալ ընդհանուր ցուցանիշները բերված են ստորև:

- Նախագծվող հողամասի ընդհանուր մակերես - 3.09123 հա,
- Կառուցապատման մակերես /շենքերի զբաղեցրած տարածքներ/ - 7280.0 քմ (23.55%),
- Հանգստի և ժամանցի համար նախատեսված տարածքներ /կանաչապատման մակերես/ - 15592.0 քմ (50.44%),
- Շատրվան - 1256.0 քմ (4.06%),
- Վերակառուցվող շինություններ - 830.0 քմ (2.69%),
- Ասֆալտապատ ճանապարհ - 2735.0 քմ (8.85%),
- Հեծանիվաուղիներ - 583.0 քմ (1.88%),
- Հետիոտնային ճանապարհ - 2637.0 քմ (8.53%),
- Բնակարանների քանակ - մոտ 550 հատ,
- Ավտոկայանատեղիներ - մոտ 440 հատ,
- Քանդման ենթակա շինությունների մակերես - մոտ 860.0 քմ:

Այսպիսով՝

- Կառույցի վերգետնյա (Շենքերի, վերակառուցվող շինության և շատրվանի մակերեսները) ծավալներն են՝ 9366.0 քմ կամ 30.3%
- Ճանապարհներ և սալվածքներ (Ասֆալտապատ, հետիոտնային ճանապարհների և հեծանիվաուղիների մակերեսը)՝ 5955.0 քմ կամ 19.26%
- Կանաչապատում՝ 15592.0 քմ կամ 50.44%

Նշված աշխատանքների շրջանակներում նախատեսվում է իրականացնել նաև առկա պարսպին կից գոյություն ունեցող «Է» մասնաշենքի վերանորոգում, որի մակերեսը կազմում է 830 քմ (ներկայացված է ՀԱՎԵԼՎԱԾ 1-ում), որտեղ նախատեսվում է ամրակայել գոյություն ունեցող արտաքին պատերը, կատարել ներքին հարդարման աշխատանքներ:

Համալիրի կենտրոնական հատվածում նախատեսված է կանաչապատում: Կանաչապատ տարածքներում նախատեսված են՝ խաղահրապարակներ, երեխաների և մեծահասակների ժամանցային տարածքներ, շատրվան, որի նպատակն է Աստղիկ համալիրը դարձնել Վարդավարի կենտրոն, որը խորհրդանշական արժեք ունի: Շատրվանի տարածքը նաև կօգտագործվի ազգային և միջազգային միջոցառումներ կազմակերպելու համար:

Նախագծի հիմնական և կարևորագույն նպատակն է կառուցել էներգաարդյունավետ շենքեր, նվազեցնելով էներգիայի օգտագործումը բնակելի տարածքներում որոնք բարենպաստ կլինեն ե՛վ բնակիչների համար ե՛վ միջավայրի նկատմամբ (համաշխարհային նորմերի համապատասխան): Էներգաարդյունավետություն ապահովելու համար օգտագործվելու են համապատասխան մեկուսացման շերտեր և նյութեր, բարձր որակի պատուհաններ և արևային վահանակներ (ուսումնասիրված համապատասխան մասնագետների կողմից):

Ա. նախապատրաստական աշխատանքներ,

Շինարարական աշխատանքները սկսելու համար նախատեսվում է իրականացնել հետևյալ նախապատրաստական աշխատանքները՝

- Մինչ շինարարական հրապարակում որևէ աշխատանքի իրականացումը պետք է համապատասխան կազմակերպությունների հետ համաձայնեցված (ենթակառուցվածքի սեփականատեր) ստանալ թույլտվություններ/համաձայնություններ
- Իրականացնել առկա կիսակառույց շինությունների քանդման աշխատանքները համաձայն Աշտարակի համայնքապետարանի քաղաքապետարանի կողմից 17.06.2022 թ. տրված թիվ 02 քանդման թույլտվության (պատճեն կցվում է **Հավելված 4**):
- Կազմակերպել շինհրապարակ՝ ժամանակավոր պարսպապատմամբ/ցանկապատմամբ և այլ անհրաժեշտ ենթակառույցներով:
- Տարածքը մաքրել շինարարական աղբից և ապամոնտաժված տարրերից, որոնք բարձվում են ինքնաթափեր և տեղափոխվում նախապես համաձայնեցված/հատկացված տարածք:
- Ժամանակավոր շինությունների տեղադրում, որոնք նախատեսված են ապահովելու շինարարության ընթացքում սանիտարա-կենցաղային, պահեստային և արտադրական կարիքները,
- շին-մոնտաժային մեխանիզմների, ամբարձիչ-տրանսպորտային միջոցների և գործիքների առաքումը շին. հրապարակ,
- շին. հրապարակի լուսավորման ապահովում:

Հաշվի առնելով տեղանքի պայմանները, անհրաժեշտ է կազմակերպել անվտանգության տեխնիկայի կանոնների իրականացման համալիր մշակում՝ ղեկավարվելով ՀՀՇՆ III-IV.2008-ի դրույթներով:

Բ. Շինարարական հրապարակ. բնակելի համալիրի շինարարական աշխատանքների իրականացման համար նախատեսվող շինհրապարակն ամբողջ տարածքն է:

Ըստ շինարարության կազմակերպման նախագծի և համաձայն «Կազմակերպություններում Աշխատողների Սանիտարակենցաղային Սենքերի» N 2.2.8-003-12 Սանիտարական Կանոնները և Նորմերը Հաստատելու Մասին ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանի աշխատողների սանիտարակենցաղային պայմանները ապահովելու նպատակով շինհրապարակում նախատեսվում է՝


- Գրասենյակ 1 հատ
- Ճաշարան 1հատ
- Հանդերձարան
- Լոգարան
- Բիոզուգարան՝ լվացարանով
- Աղբի տարաններ

ինչպես նաև


- Հակահրդեհային վահանակ՝ 6 հատ,
- Ավտոմեքենաների կայանման, առասանման ճոպանների տեղակայման վայրեր,
- Պահակատուն,
- Շինարարական նյութերի, գործիքների պահեստներ,
- Շինհրապարակում լինելու են նաև ավտոմեքենաների անիվների լվացման հարթակ:

ՇԻՆՀՐԱՊԱՐԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Շին. Զրապարակի Կազմակերպման Հատակագիծ (Փուլ - 1) - 1:1000



Շին. Հրապարակի Կազմակերպման Հատակագիծ (Փուլ - 2) - 1:1000



Շինհրապարակը առանձնանալու է ճանապարհը փակող նշաններով՝ անվտանգության նորմատիվների համաձայն:

Մինչև շինարարության սկսելը շինհրապարակում կատարվելու են կոմունիկացիաների տեղադրման, միացման աշխատանքներ:

Շինարարության փուլում աշխատողների խմելու ջրի պահանջարկն ապահովվելու է գոյություն ունեցող ջրագծից:

Շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող բիոզուգարանից, ինչը աշխատանքների ավարտից հետո ապամոնտաժվելու է: Բիոզուգարանների սպասարկումն իրականացվելու է համապատասխան մասնագիտացված կառույցների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շինարարության փուլում էլեկտրամատակարարումը և ջրամատակարարումը կատարվելու է գոյություն ունեցող համակարգերից (կառուցված շենքի համապատասխան համակարգերից):

Շինհրապարակի տարածքում կատարվելու է մեքենաների անիվների լվացում՝ լվացման սարքի միջոցով: Անիվների լվացում պահանջող մեքենաները պետք է անցնեն անիվների լվացման սարքի միջով՝ շինհրապարակից դուրս գալուց առաջ: Շինհրապարակում անիվների լվացումից առաջացած, ինչպես նաև շինարարական այլ գործընթացներից առաջացող հոսքաջրերը միավորվելու են մեկ բակային՝ ջրահեռացման ցանցին և միանան շինհրապարակում տեղադրված պարզարանին: Իսկ անձրևաջրերից առաջացող մակերևութային հոսքաջրերը կուղղորդվեն բակային սելավային ջրացանց, այնուհետև պարզարան: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում: Պարզեցված ջուրը կօգտագործվի շինարարական աշխատանքների ժամանակ արտադրական հրապարակի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ: Մեքենաների անիվների լվացման համար անհրաժեշտ որակի ջրաքանակի ապահովումը նախատեսվում է իրականացնել մեքենաներով բերելու եղանակով՝ (մինչ շինարարական աշխատանքների մեկնարկը կապալառու կազմակերպությունը համապատասխան պայմանագիր կկնքի ջրօգտագործման թույլտվություն ունեցող ջրամատակարար կազմակերպության հետ):

Գ. Քանդման և հողային աշխատանքներ

Ըստ նախնական գնահատման գոյություն ունեցող՝ քանդման ենթակա շինությունների ծավալը 180 խմ է, որոնց քանդումից մոտ 70 խմ ուղիղ տաշած տուֆ քարերը նախատեսվում է օգտագործել շինարարական աշխատանքներում, իսկ մնացած 110 խմ շինարարական աղբը, կտեղափոխվի համապատասխան համաձայնեցված/ հատկացված վայր:

Շինարարության ընթացքում մշակման ենթակա գրունտերը պատկանում են IV , VI կարգի: Գրունտերի մշակումը փոստրակում և խրամուղիներում իրականացվում է “հետ-բահ”

էքսկավատորով: Մաքրամշակումը իրականացվում է ձեռքով բանվորական ուժի օգնությամբ: Բնահողի տեղափոխման համար ընտրված է ավտոինքնաթափ: Հետլիցքի իրականացման համար օգտագործվում են գրունտի փափուկ բնահողերը: Հիմքերի, հարթակների և հատակների հետլիցքը իրականացվում է բանվորական ուժի օգնությամբ՝ տեղափոխելով գրունտը սայլակներով: Հետլիցքը նախատեսվում է խտացնել ձեռքի պնեվմատոփիչներով:

Շինարարական աշխատանքների ժամանակ կառուցապատվող տարածքի համար հողային աշխատանքներից առաջացող հանույթի, մշակվող գրունտի ծավալը ընդհանուր կկազմի 52.000 խմ: Հատկացվող հողամասում շինություններից ազատ տեղամասերում նկատվող հողի բուսաշերտը գնահատվել է 640 խմ: Այս և հետագայում բերվող ցուցանիշները նախնական են և վերջնական նախագծում կարող են փոփոխվել, բայց ոչ էական:

Ազդեցության ենթակա բուսահողը կհեռացվի և ժամանակավոր կպահվի տարածքի արևելյան մասում՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պահանջներին համապատասխան: Հետագայում բուսահողի նշված զանգվածը կօգտագործվի բնակելի թաղամասի կանաչապատման աշխատանքներում:

Հիմքերի փորման ժամանակ առաջացած մնացորդային հողային գրունտների մի մասը՝ մոտ 20 %-ը (գրունտի 10400 խմ ծավալը) կտեղափոխվի համաձայնեցված/հատկացված վայր, իսկ մնացածը շինարարական աշխատանքների ընթացքում կօգտագործվի որպես հետլիցք:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող տարբեր տեսակի շինարարական թափոնները, որոնց ծավալը գնահատվում է՝ մոտավոր 420 խմ, ինչպես նաև վերը նշված քանդման թափոնները 110 խմ (**Ընդհանուր 110+420=530 խմ**) և մնացորդային գրունտները նույնպես տեղափոխվելու են համաձայնեցված/հատկացված վայր:

Դ. Շինարարական աշխատանքներ

Բնակելի համալիրի կառուցման շինարարական աշխատանքները ներառում են՝

- Քանդման ենթակա շինությունների քանդումը և տեղափոխումը,
- Շին. հրապարակի ցանկապատումը և անհրաժեշտ շինությունների տեղադրումը,
- Շենքերի հիմքերի փոստրակների հողային աշխատանքների իրականացում,
- Շենքերի երկաթ-բետոնյա կարկասների կառուցում,
- Շենքերի արտաքին և ներքին պատերի շարվածքների իրականացում,
- Շենքերում ներքին և արտաքին պատերի սվաղ՝ գաջի և ց/ավազե շաղախներոց,
- Վերելակների մոնտաժում՝ կարգավորում և թողարկում աշխատանքների իրականացում,

- Շենքերի ներքին կոմունիկացիաների և հարդարման աշխատանքների իրականացում,
- Ինժինեռական ենթակառուցվածքների շին. մոնտաժային աշխատանքների իրականացում,
- Արտաքին և ներքին կոմունիկացիաների ջրագծի, կոյուղատարի և էլեկտրալարերի իրականացում,
- Բարեկարգման և կանաչապատման աշխատանքների իրականացում:

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունն իրականացվելու է ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում, դրանք կվարձակալվեն այլ կազմակերպություններից:

Շինարարական աշխատանքներն իրականացվելու են հետևյալ մեքենա-մեխանիզմներով.

- Վերամբարձ կռունկ КБ-408 (3 հատ),
- Ավտոամբարձիչ АГП-28, կամ տվյալ տեսակին համարժեք տեխնիկական տվյալներով (2 հատ),
- Բեռնատար ինքնաթափ МА3 530, կամ համարժեք տեխնիկական տվյալներով (4 հատ),
- Բետոնամղիչ СБ-126, կամ համարժեք տեխնիկական տվյալներով (2 հատ),
- Շարժական կոմպրեսոր ЗИФ-55 В, կամ համարժեք տեխնիկական տվյալներով (2 հատ),
- Էլ. Եռակցման սարք СТН 500, կամ համարժեք տեխնիկական տվյալներով,
- Բուլդոզեր Т-70 (2 հատ),
- Էքսկավատոր Hyundai (2 հատ),
- Ձեռքի էլեկտրական գործիքներ,
- Ձեռքի մեխանիկական գործիքներ,
- Ատաղձագործական գործիքներ,
- Ներկարարական գործիքներ:

Ապրանքային բետոնը շին. հրապարակ է կբերվի պատրաստի վիճակում՝ բետոնատար ինքնաթափերի միջոցով ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան գործող ավտոմատ բետոնա-շաղախային հանգույցից: Ամրանային իրերը պատրաստվելու են հատուկ պոլիգոններում, մասամբ շին. հրապարակում:

Շինարարական աշխատանքների՝ բեռնման-բեռնաթափման ժամանակ օգտագործվող բեռնաբարձիչ մեքենաները, բեռնաբռնիչ սարքերը պետք է համապատասխանեն պետական ստանդարտներին կամ տեխնիկական պայմաններին՝ համաձայն ՇՆ և Կ III-4-80* պահանջներին: Բեռնման և բեռնաթափման համար նախատեսված տարածքը պետք է հարթեցվի և ունենա 50 -ից ոչ ավել թեքություն:

Մեքենաներն աշխատելու են ըստ հերթականության և ըստ անհրաժեշտության: Աշխատող մեքենաները կայանվելու են գործունեության տարածքում՝ արտադրական հրապարակում: Շինարարական տեխնիկայի և սարքավորումների կայանման վայրերում նախատեսվում է ավագի կամ մանրախճի փռում՝ վառելիքի կամ քսայուղերի հնարավոր արտահոսքը հողային և ջրային ռեսուրսներ կանխելու նպատակով: Աղտոտված ավազը կամ մանրախիճը տեղափոխվելու է համապատասխան աղբավայր և փոխարինվելու է նորով:

Գործունեության վայր շինտեխնիկան և ավտոմեքենաները մոտենալու են գոյություն ունեցող ճանապարհով: Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և սպասարկումն իրականացվելու է շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Կառուցապատման բոլոր լուծումների համար հաշվի են առնվելու տեղանքի պայմանները, կազմակերպվելու է անվտանգության տեխնիկայի կանոնների իրականացման համալիր միջոցառումներ՝ ղեկավարվելով ՀՀՇՆ III-IV.2008-ի դրույթներով:

Ամբողջ շինարարության ընթացքում վերահսկվելու են շինարարության որակի չափանիշները՝ տեխնիկական վերահսկողություն իրականացնող մարմնի, ինչպես նաև պետական այլ կառույցների կողմից:

Շինարարության ընթացքում բանվորները կսնվեն հատուկ ճաշարան-տնակում: Միաժամանակ աշխատողների թիվը շինարարության տարբեր փուլերում կլինի առավելագույնը 59 մարդ, այդ թղվում՝


- Ինժեներատեխնիկական անձնակազմ - 2 մարդ,
- Արհեստագործներ և բանվորներ - 47 մարդ,
- Մեքենավարներ և օգնականներ - 10 մարդ:

Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրն ու շինարարության ընդհանուր ծավալը: Շինարարության տևողությունը կազմում է 72 ամիս՝ շինարարական մեկնարկից:

Շինարարության տևողությունը հաշվարկված է ըստ ՇՆ և Կ 1.04.03-85 «Շինարարության տևողության նորմեր» և ՍՆԻՊ 1.04.03.2008-ի նորմերին համապատասխան:

Աղյուսակ 2

Շինարարական Աշխատանքների Իրականացման Ժամանակացույց



4.3 Ջրամատակարարում և ջրահեռացում

Ջրապահանջը

Ջրամատակարարման և ջրահեռացման գործընթացներն իրականացվում են գործող շինարարական նորմերի ու կանոնների և տեխնիկական պայմանների համաձայն:

Բնակելի համալիրի կառուցման աշխատանքային նախագծի «Ջրամատակարարում և կոյուղի» բաժինն իր մեջ կներառի՝

- Արտաքին և ներքին ջրամատակարարում
- Տարածքի ոռոգում
- Արտաքին և ներքին կոյուղի
- Անձրևաջրերի հեռացման հեղեղատար կոյուղի:

Ջրամիացումը և ջրահեռացումն իրականացվելու է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից տրվող Ջրամիացման և ջրահեռացման նախագծման տեխնիկական պայմաններին համապատասխան (Տեխնիկական պայման՝ N ՎՋ 6357/2022, տրված 09.12.2022թ., Տես Հավելված 6):

Համաձայն տրված տեխնիկական պայմանի՝ ջրամիացումն իրականացվելու է նախագծված տարածքից մոտ 400 մ հեռավորությամբ անցնող 400մմ տրամագիծ ունեցող ջրագծից, իսկ ջրահեռացումն իրականացվելու է տարածքից 250 մ հեռավորությամբ անցնող 250 մմ տրամագիծ ունեցող կոյուղագծի միջոցով: Ջրաչափական հանգույցի համար նախատեսվում է կառուցել դիտահոր, ինչպես նաև նախատեսվելու է ճնշման կարգավորիչ և փական: Կոյուղագծի միացման կետում նույնպես նախատեսվում է կառուցել դիտահոր:

Ներքին տաք և սառը ջրամատակարարում, ջեռուցում

Առաջին 2 մասնաշենքերը նախատեսված չէ կենտրոնական ջեռուցում, այլ պետք է իրականացվի անհատական ջեռուցում յուրաքանչյուր բնակարանին առանցին, օգտագործելով ջեռուցման կաթսաներ:

Իսկ մնացած մասնաշենքերի համար նախատեսված է կենտրոնացած ջեռուցում: Այդ նպատակով յուրաքանչյուր շենքի տանիքին տեղադրվելու է կաթսայատուն:

Յուրաքանչյուր շենք ունենալու է ավտոնոմ ջեռուցման և տաք ջրամատակարարման ցանցեր: Շենքերի տանիքներում տեղադրվելու են գազային ջրատաքացուցիչներ, որոնց ընտրությունը իրականացվելու է համաձայն հետևյալ տեխնիկական բնութագրերի.

- վառելիքի տեսակը՝ բնական գազ,
- ՕԳԳ՝ $\geq 92\%$,
- ջրի սնուցման մեկ հիմնական և մեկ պահուստային պոմպ,
- շրջանառու ջրի ճնշման ավտոմատ կարգավորիչ,
- օդային խառնուրդի կարգավորման ավտոմատ համարակց:

Նախատեսվող կաթսաների ծխատար խողովակները պետք է վեր բարձրանան տանիքից նվազագույնը՝ 1.2մ:

Դրվածքային հզորության գործակիցը՝ $Q_{nom} \geq 1.2$:

Աձրևաջրերի հեռացում /հեղեղատար կոյուղի/

Տարածքի մակերևութային ջրերի մի մասի հեռացումը նախատեսված է կազմակերպված եղանակով, հեղեղատար կոյուղու համակարգի միջոցով: Մնացած անձրևաջրերի մասը հավաքվում է նախատեսված ջրամբարում, կանաչապատ տարածքները ջրելու համար:

Տարածքի ցածրադիր տեղերում տեղադրվելու են անձրևընդունիչ հորեր, որտեղից անձրևաջրերը կհեռացվեն տարածքից և կմիացվեն գործող քաղաքային 400 մմ հեղեղատար ցանցին:

4.4 Կանաչապատում և բարեկարգում

Նախագծով նախատեսված շինարարական աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը նախատեսվում է բարեկարգել և կանաչապատել: Կանաչապատման մակերեսը կկազմի ընդհանուր հողամասի 50.44%-ը /մոտավորապես 15592.0 քմ/, մնացածը կկազմի կառուցապատումը, ներառյալ՝ սալվածքները և սպասարկման տարածքները: Կանաչապատման համար նախատեսվում է օգտագործել հողային աշխատանքների ժամանակ պահեստավորված բուսահողը: Կանաչապատումը կիրականացվի համաձայն կանաչապատման հատակագծի և սխեմայի:

Նախատեսված կանաչապատման աշխատանքները կիրականացվեն ՀՀ կառավարության 08.02.2018 թվականի N 108-Ն որոշման համապատասխան:

4.5 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում

Բնակելի թաղամասի կառուցման շինարարության ժամանակ օգտագործվում են տարբեր շինարարական նյութեր, այդ թվում՝ մետաղ, բետոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, ապակի, բարձրորակ սվաղ, երեսապատման բարձրորակ նյութեր, էքստրուդացված պոլիստիրոլի մեկուսացում, ավազ, ցեմենտ, ներկանյութեր, մետաղական կոնստուկցիաներ և այլն:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ շինհրապարակների տարածքների ջրցանի, ինչպես նաև աշխատողների կենցաղային կարիքների համար: Ջրամատակարարումն իրականացվելու է տեխնիկական պայմանի համաձայն՝ գոյություն ունեցող ջրատարից, որը կմիացվի քաղաքային ջրամատակարարման ցանցին, իսկ կոյուղին կմիացվի քաղաքային կոյուղատարին:

Էլեկտրաէներգիայի պահանջարկը շինարարության փուլում կապահովվի քաղաքային Էլ. Ցանցի ենթակայանից:

Բնակելի շենքերի էլեկտրամատակարարումը կիրականացվի ՀԷՑ ՓԲԸ կողմից տրվող տեխպայմանների հիման վրա որը հնարավոր կլինի իրականացնել կառուցելով համապատասխան հզորության 35/10 կՎ և 10/0,4 կՎ ենթակայաններ, ե/կ-ները սնող 35 կՎ և 10 կՎ և բնակելի շենքերը սնող 0,4 կՎ Էլ. Հաղորդման գծեր:

5 ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅՐ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

5.1 Տարածքի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները

Նախատեսվող գործունեության իրականացման տարածքը գտնվում է ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի Սուրբ Սարգսի փողոց N 73/6-73/8 հասցեում՝ 3,09123 հա տարածքի վրա:

Հետազոտվող տարածքը գտնվում է Հայաստանի Հանրապետության արևմտյան մասում՝ Արագածոտնի մարզում և ընդգրկում է Քասախ գետի միջին հոսանքի հատվածները:

Գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տարածքը մտնում է Արագած լեռան ստորին լանջերի մեջ: Գտնվում է Քասախ գետի ափին, ծովի մակերևույթից 1100 մ բարձրության վրա, Արարատյան դաշտի և Արագածի լեռնազանգվածի կենտրոնում, Երևան քաղաքից 13 կմ հյուսիս-արևմուտք:

5.2 Կլիմա

Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքին բնորոշ է չոր ցամաքային կլիման: Հուլիսին օդի միջին ջերմաստիճանը տատանվում է 20-ից 24°C միջակայքում: Առավելագույն ջերմաստիճանը հասնում է 40°C և ավելի: 10°C-ից բարձր ջերմաստիճանով օրերի թիվը 180-ից 200 է: Հունվարին օդի միջին ջերմաստիճանը տատանվում է -4-ից -6°C միջակայքում: Նվազագույն ջերմաստիճանը հասնում է -34°C-ի: Կայուն ձնածածկույթը պահպանվում է միջինը 1-ից 3 ամիս: Առանց սառնամանիքի օրերի թիվը տատանվում է միջինը 200-ից 240 օրերի միջակայքում: Տարեկան տեղումների քանակը կազմում է 300-400 մմ, որոշ դեպքերում՝ 400-500 մմ: Տարեկան գոլորշունակությունը 900-1100 մմ է և օդի միջին հարաբերական խոնավությունը տատանվում է 40%-ից (ամռանը) 75% (ձմռանը): Քամիների ուղղությունները հիմնականում հյուսիսային և հյուսիս-արևելյան են:

Լեռնային երկրներին հատուկ օրինաչափությամբ՝ ՀՀ-ում կլիմայական գոտիները փոխվում են ըստ բարձրության: Ներկայացվող տարածքի կլիմայական պայմանների նկարագրության համար օգտվել ենք ՀՀ քաղաքաշինության նախարարի 2011թ. սեպտեմբերի 26-ի N167-Ն հրամանով հաստատված «Շինարարական կլիմայաբանություն »ՀՀՇՆ II-7.01-2011 փաստաթղթից:

Ստորև բերված աղյուսակներով ներկայացվում են տարածաշրջանի կլիմայական ցուցանիշները, որոնք պետք է հաշվառվեն նախագծման, շինարարության և շահագործման ընթացքում:

Աղյուսակ 3. Օդի ջերմաստիճանը, °C

Բնակավայրի անվանումը	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Օդի միջին ամսական, ըստ ամիսների °C												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
		I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			
Աշտարակ	1090	-4.2	-1.3	4.4	11.3	16.2	20.8	24.7	25.0	20.2	13.6	6.6	-0.5	11.4	-25	41

Աղյուսակ 4. Օդի խոնավությունը (%)

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %														Միջին տարեկան	միջինը ժամը 15-ին	
	ըստ ամիսների												ամենացուրտ ամսվա	Ամենաշոգ ամսվա			
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII					
Աշտարակ	76	68	61	60	59	53	51	49	53	61	70	77	62	67	40		

Աղյուսակ 5. Քամի

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (հՊա)	Ամիսներ	Կրկնելիությունը, % ըստ ուղությունների Միջին արագություն, մ/վ								Անհողմությունների կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Միջին տարեկան արագությունը, մ/վ
			Հյուսիսային (Հս)	Հյուսիս-Արևելյան (ՀսԱրլ)	Արևելյան (Արլ)	Հարավ-Արևելյան (ՀվԱրլ)	Հարավ (Հվ)	Հարավ-Արևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիս-Արևմտյան (ՀսԱրմ)			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
Աշտարակ	892,0	հունվար	4	21	22	11	16	12	10	4	0	2,0	2.5
			1,6	2,0	2,2	2,3	2,0	1,8	2,0	2,1			
		ապրիլ	4	18	23	12	15	13	11	4	0	2,7	
			3,7	2,8	2,6	2,8	2,8	2,7	2,9	2,8			
		հուլիս	4	26	23	11	12	11	9	4	0	3,2	
			4,4	3,5	3,3	3,2	3,2	2,6	2,7	3,2			
		հոկտեմբեր	4	24	26	12	13	10	9	2	0	2,2	
			1,7	2,1	2,3	2,4	2,3	2,1	2,1	2,2			

Գրունտի սառեցման առավելագույն խորությունը, համաձայն ՀՀՇՆ II-7.01.2011 նորմերի, ուսումնասիրվող տարածքում կազմում է 0,7 մետր:

5.3 Տարածքի ինժեներա-երկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանները

Ուսումնասիրվող տարածքի երկրաբանական կտրվածքում մասնակցում են Չորրորդականի հասակի լավաները, որոնք հիմնականում մերկանում են Քասախ գետի կիրճում, մնացած հատվածներում նրանք ծածկված են ոչ մեծ հզորության ժամանակակից առաջացումներով, որոնք ներկայացված են ավազակավերով, կավավազներով, խճային գրունտներով և գետի հունային մասերում գլաքարաճալքարային նստվածքներով

Համաձայն կատարված ուսումնասիրությունների, հորատման, արխիվային նյութերի տվյալների՝ (նախկինում լաբորատոր ուսումնասիրման հիման վրա) ուսումնասիրվող տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են հետևյալ գրունտները՝ վերնից-ներքև:

Շերտ-1 խճային գրունտ խճավազի պարունակությամբ տեղ-տեղ խարամացված բազալտի պարունակությամբ 10-20%: Գրունտը պինդ է, լցոնը՝ շագանակագույն և պինդ թանձրության: Դրանք ժամանակակից դելյուվիալ-պրոյուվիալ առաջացումներ են: Գրունտն ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇՀՊ IV-5-82-ի (13) IV կարգ է:

Շերտ-2 Բեկորային բազալտ ամուր, մոխրագույն, կապտամոխրագույն, ծակոտկեն տեղ-տեղ խոռոչավոր ճեղքավորված: Շերտում լցանյութը կավավազային է 10-15%: Ժամանակակից չորրորդական հասակի ապարներ են: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇՀՊ IV-5-82-ի (6ա) V I կարգ է:

Շերտ-3 Տուֆ կարմրից սև գույնի: Ժամանակակից չորրորդական հասակի ապարներ են: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇՀՊ IV-5-82-ի (37) V կարգ է:

Տարածքի հիդրոերկրաբանական պայմանները

Հիդրոերկրաբանական տեսակետից ուսումնասիրվող տարածքը համարվում է լավ ինֆիլտրացվող գոտի, որը հանդիսանում է մթնոլորտային տեղումների հիմնական մասի տեղափոխումը ճեղքավորված լավաների միջոցով դեպի արարատյան ստորգետնյա ջրավազան: Տեղամասում մինչև 17 մետր խորությամբ փորված հորատանցքներով ստորերկրյա ջրեր չեն բացահայտվել: Տվյալ տարածքի հիդրոերկրաբանական պայմանները հիմնականում բարենպաստ են:

Համաձայն իրականացված ինժեներաերկրաբանական հետազոտությունների ուսումնասիրվող տարածքում բացակայում են Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, ինչպես նաև ինժեներաերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար:

5.4 Տարածքի սեյսմիկ բնութագիրը

Նախատեսվող գործունեության տարածքը համաձայն ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 102-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ 20.04_«Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմերում» ներառված ՀՀ տարածքի սեյսմիկ վտանգի հաստատված քարտեզում:

Նախագծային աշխատանքների ժամանակ պետք է հաշվի առնվի սեյսմիկ վտանգի գործոնը, որը ըստ Հայաստանի Հանրապետության տարածքի հավանական սեյսմիկ վտանգի գոտիավորման քարտեզի՝ ՀՀՇՆ 20.04.2020թ. տեղամասը գտնվում է I սեյսմիկ գոտու մեջ՝ Գրունտի սպասվելիք արագացումների մեծություններով՝ A, ազատ անկման g արագացման մասերով՝ $A_{max}=0.3g$:

5.5 Մթնոլորտային օդ

Հայաստանի հանրապետության տարածքում օդային ավազանի աղտոտվածությունը վերահսկվում է Հայաստանի Հանրապետության Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումներն իրականացվում են հիբրիդային դիտացանցի միջոցով: Այն բաղկացած է 15 հիմնական անշարժ՝ ակտիվ նմուշառման և ավտոմատ դիտարկումների դիտակայանից, որտեղ դիտարկումներն իրականացվում են ամենօրյա կտրվածքով և 214 շարժական՝ պասիվ նմուշառման դիտակետից, որտեղ իրականացվում են շաբաթական դիտարկումներ:

ՀՀ և միջազգային պահանջների համաձայն անշարժ դիտակայաններում կատարվում է հիմնական աղտոտող նյութերի՝ ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, փոշու, փոշու մեջ որոշվող մետաղների և գետնամերձ օզոնի (որպես երկրորդային աղտոտիչ) մոնիթորինգ, իսկ շարժական դիտակետերում՝ ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի մոնիթորինգ: Օդի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2006 թ. օգոստոսի 2-ի N160-Ն որոշման:

2021 թվականի ընթացքում մթնոլորտային օդի որակի դիտարկումներ կատարվել են Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Ծաղկաձոր, Կապան, Քաջարան և Չարենցավան քաղաքներում:

Ուսումնասիրվող տարածքում «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից տեղադրված մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումներների համար նախատեսված հիմնական անշարժ և շարժական կայաններ տեղադրված չեն, և Աշտարակ քաղաքի օդային ավազանի օդի որակի վերաբերյալ ելակետային տվյալներ պաշտոնական տեղեկագրերում ներկայացված տվյալներ չկան, հետևաբար եթե տվյալ բնակելի տարածքի համար համապատասխան տեղեկատվությունը ֆոնային

աղտոտվածության վերաբերյալ բացակայում է և այդ տարածքում բացակայում են զգալի յուրահատուկ արդյունաբերական աղտոտման աղբյուրներ, ապա 250000 մարդուց պակաս բնակելի տարածքների համար ֆոնային աղտոտվածության խտություններն ամենատարածված աղտոտող նյութերի համար համաձայն ՀՀ կառավարության 27.12.2012 թվականի 1673-Ն որաշմամբ ընդունվում են հետևյալ ցուցանիշները՝

- ծծմբի երկօքսիդի համար՝ 0.1 մգ/մ խոր.,
- ազոտի օքսիդների համար՝ 0.03 մգ/մ խոր.,
- ածխածնի օքսիդի համար՝ 1.5 մգ/մ խոր.,
- չտարբերակված անօրգանական փոշու համար՝ 0.2 մգ/մ խոր.:

5.6 Ջրային ռեսուրսներ

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը նույնպես վերահսկվում է «Հիդրոօբերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ կողմից:

Մակերևութային ջրերի քանակի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է 151 դիտակետ Հանրապետության 6 ջրավազանային կառավարման տարածքի (Հյուսիսային, Ախուրյան, Հրազդան, Սևան, Արարատյան, Հարավային) գետերի, ջրանցքների, ջրամբարների և Սևանա լճի վրա, որոնցում կատարվում են ամենօրյա դիտարկումներ ջրի և օդի ջերմաստիճանի, ջրի մակարդակի, սառցային երևույթների դիտարկումներ և ջրի էլքի չափումներ: ՀՀ կառավարության «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշմամբ (ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 27-ի N 75-Ն որոշում) ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով: Եթե ջրի որակի տարբեր ցուցանիշներ ընկնում են որակի տարբեր դասերի մեջ, ապա վերջնական դասակարգման մեջ հաշվի է առնվում վատագույնը:

Նախատեսվող գործունեության իրականացման տարածքը տեղակայված է Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքում: Հրազդանի Ջրավազանային Կառավարման Տարածքը (ՋԿՏ) ներառում է Հրազդանի և Քասախի գետավազանները: Այստեղ ջրային ռեսուրսների աղտոտման աղբյուրներ են հանդիսանում հիմնականում կոմունալ-կենցաղային կեղտաջրերը: 2021 թվականին Հրազդանի ՋԿՏ-ում մակերևութային ջրերի որակի մոնիթորինգն իրականացվել է 20 դիտակետում, որոնցից 5%-ում ջրի որակը

գնահատվել է 2-րդ դաս, 30%-ում՝ 3-րդ դաս, 15%-ում՝ 4-րդ դաս և 50%-ում՝ 5-րդ դաս: Նախորդ տարվա համեմատ 2021թվականին ջրի որակի էական փոփոխություն չի նկատվել:

Քասախ գետի ջրի որակը Աշտարակ քաղաքից վերև և ներքև հատվածներում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Աշտարակ քաղաքից վերև՝ պայմանավորված ֆոսֆատ իոնով, մոլիբդենով, վանադիումով և երկաթով իսկ Աշտարակ քաղաքից ներքև՝ պայմանավորված ֆոսֆատ իոնով և վանադիումով:

Գետաբերանի հատվածում ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված նիտրատ իոնով:

Տարածքի հեռավորությունը Քասախ գետի մոտակա հատվածից ուղիղ գծով կազմում է 200-300 մ:

5.7 Հողային ռեսուրսներ

Աշտարակ համայնքը գտնվում է ՀՀ Արագածոտն մարզի Ատարակի տարածաշրջանում և պատկանում է չոր տափաստանային բնահողային գոտուն, որտեղ տարածված են շագանակագույն տիպի հողերը, իրենց բազմաթիվ ենթատիպերով: Այս տիպի հողերն ըստ մեխանիկական կազմի հիմնականում միջին կավավազային են և ունեն հետևյալ առանձնահատկությունները. առաջին՝ հումուսի միջին պարունակությունը 2-4% է, երկրորդ՝ քարքարոտ են, երրորդ՝ աչքի են ընկնում խիստ արտահայտված, մասամբ ցեմենտացված էլյովիալ-կարբոնատային հորիզոնի առկայությամբ, չորրորդ՝ ունեն թույլ հիմնային և հիմնային ռեակցիա (рН 7.4-8.5), հողի կլանունակությունը 30-35 մգ/էկվիվալենտ է և հինգերորդ՝ ունեն անբարենպաստ ջրաֆիզիկական հատկություններ:

Բուսաշերտը դիտարկվող տարածքում առկա է շինություններից ազատ տեղամասերում: Բուսաշերտի հզորությունը տատանվում է 10 – 15 սմ:

Ծրագրի իրականացման տարածքի հողամասի գործառնական նշանակությունը կամ հողատեսքը խառը կառուցապատման է: Ծրագրի իրականացման տարածքի հողերի աղտոտվածության վերաբերյալ տվյալները պաշտոնական տեղեկագրերում բացակայում են, նաև մինչ այժմ ծրագրի իրականացման տարածքում որևէ արտադրական և/կամ գյուղատնտեսական գործունեություն չի իրականացվել, ուստի ծրագրի իրականացման տարածքի հողերը աղտոտված չեն կարող լինել:

Հողային աշխատանքների ժամանակ, գրունտի մշակման աշխատանքներից առաջացող հողային հանույթը և բնահողը կուտակվելու են կազմակերպված շինարարական հրապարակի տարածքում, որոնք հետագայում նախատեսվում են օգտագործել: Հեռացված գրունտի մեծ մասն օգտագործվելու է հետլիցքի նպատակով, իսկ բուսահողը՝ բնակելի թաղամասի բարեկարգման և կանաչապատման աշխատանքներում:

5.8 Կենսաբազմազանություն

Տարածքը գտնվում է Աշտարակ քաղաքի կառուցապատված գոտում: Տարածքում բուսածածկույթը և հողային ծածկույթը համատարած բնույթ չեն կրում:

Ստորև բերված է Աշտարակ համայնքի ֆլորայի և ֆաունայի վերաբերյալ տեղեկատվությունը:

5.8.1 Բուսական աշխարհ

Ներկայացվող տարածքը վերընթաց լանդշաֆտային գոտիներից զբաղեցնում է չոր տափաստանային ցածր լեռնային /1000-1600 մ/ գոտին, որին առանձին տեղամասերում /մանավանդ հարավահայաց և անջրդի/ բնորոշ է Կիսասանապատային, իսկ հիմնականում՝ Տափաստանային բուսածածկի տիպը:

Կիսասանապատային բնական բուսածածկի հիմնական կազմը օշինդրա- էֆեմերային է, մասնակցությամբ՝ *Artemisia fragrans* Willd., *Kochia prostrata* (L.) Schrad., *Capparis spinosa* Willd., *Ceratoides papposa* Botsch. et Ikonn., *Atraphaxis spinosa* L., *Rhamnus pallasii* Fisch. et Mey., *Tanacetum argrophyllum* (C. Koch) Tzvel., *Poa bulbosa* L. *Bromus*, *Aegilops*, *Eremopyrum*, *Alyssum*, *Aeluropus littoralis* (Gouan) Parl.

Տափաստանային բնական բուսածածկի կազմը հացազգային, տարախոտա-հացազգային, մասնակցությամբ՝ Շյուդախոտ վալենսիական /*Festuca valesiaca* Gaudin/, Շյուդախոտ ոչխարի /*F. ovina* L./, Բարակախոտ՝ երկու տեսակ /*Koeleria albobii* Domin, *K. cristata* (L.) Pers./, Կծմախոտ /*Bothriochloa ischaemum* (L.) Keng/, Փետրախոտ՝ երեք տեսակ /*Stipa capillata* L., *S. lessingiana* Trin. et Rupr., *S. tirsia* Stev./ Սեզ մազակիր /*Elytrigia trichophora* (Link) Nevski/, Մակարդախոտ /*Galium verum* L./, տեսակներ Սեզախոտ /*Agropyron*/, *Andropogon*, Քոսքունկ /*Scabiosa*/, Բերենիկե / *Veronica*/, Օշինդր /*Artemisia*/, Հազարտերևուկ / *Achillea*/, Գազ /*Astragalus*/: ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ չկան:

Պետք է նշել, որ նախատեսվող գործունեության ենթակա և հարակից տարածքներն արդեն իսկ խախտված են և օգտագործվում են մարդու կողմից՝ առկա է տրանսպորտային միջոցների երթևեկություն և աղմուկ, ինչի արդյունքում ներկայացված բուսատեսակները ինչպես նաև ՀՀ կարմիր գրքում գրանցված բուսատեսակները բուն նախատեսվող գործունեության և դրան հարակից տարածքներում բացակայում են:

5.8.2. Կենդանական աշխարհ

Ուսումնասիրվող տարածքի գտնվում է Աշտարակի տարածաշրջանում, որտեղ անողնաշարավոր կենդանիները բնութագրվում են համամատարաբար աղքատ և միատեսակ կազմով: Ծրագրի իրականացման արածաշրջանում հանդիպում են հանդիպում են ձորիդներից՝ *Bradyporus dilatatus*, մորեխներից *Montana armeniaca*, երկթևանիներից՝ *Eumerus*

sogdianus, բզեզներից՝ *Bruchidius armeniicus*, *Cryptocephalus moravi*, թաղանթաթևավորներից՝ իշամեղուները (*Bombus spp.*, *Torymus auretus*) և փափկամարմիններից՝ *Trichia armenica*: Կաթնասուններից, բացի ամենուրեք տարածված տեսակներից, ինչպես օրինակ՝ նապաստակը (*Lepus europaeus*), աղվեսը (*Vulpes vulpes*), գայլը (*Canis lupus*), հիմնականում լայն տարածում ունեն կրծողների կարգի մի քանի ներկայացուցիչներ, ծրագրի իրականացման արածաշրջանում հանդիպում են թփուտային դաշտամուկը (*Msubterraneus*) և կզաքիսը (*Martes foina*):

Պետք է փաստել, որ դիտարկվող տարածքում և նրա հարակից տարածքներում արդեն իսկ առկա է մարդկային գործոնը, առկա է տրանսպորտային երթևեկություն, մեքենաների շարժ և աղմուկ, ինչի պարագայում վայրի կենդանատեսակներ չեն կարող լինել:

Ուսումնասիրվող տարածքը չի առնչվում մշակութային հուշարձանների, պահպանության ենթակա տարածքների, կամ կենսաբազմազանության վտանգված տեսակների հետ:

Պետք է նշել, որ նախատեսվող գործունեության ենթակա և հարակից տարածքներն արդեն իսկ խախտված են և օգտագործվում են մարդու կողմից՝ առկա է տրանսպորտային միջոցների երթևեկություն և աղմուկ, ինչի արդյունքում ներկայացված կենդանատեսակները ինչպես նաև ՀՀ կարմիր գրքում գրանցված կենդանատեսակները բուն նախատեսվող գործունեության և դրան հարակից տարածքներում բացակայում են:

5.8.3. Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Ծրագրի ազդեցության ենթակա և հարակից տարածքներում չկան ԲՀՊՏ-ներ՝ արգելոցներ, ազգային պարկեր, պետական արգելավայրեր կամ բնության գրանցված հուշարձաններ:

ՀՀ Արագածոտնի մարզում գրանցված է միայն «Արագածի ալպյան» արգելավայրը, որը նշված տարածքից գտնվում է գտնվում է մոտավորապես 40 կմ հեռավորության վրա:

5.9 Պատմության և մշակութային հուշարձաններ

Համաձայն ՀՀ Պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման (15.03.2007թ. N 385-Ն) Աղյուսակ 6-ում ներկայացված է ՀՀ Արագածոտն մարզի Աշտարակ քաղաքի օտարման ոչ ենթակա պատմության և մշակութային հուշարձանների ցանկը:

Համաձայն ՀՀ Արագածոտն մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշում (29.05.2002թ. N 628) Աղյուսակ 7-ում ներկայացված է ՀՀ Արագածոտն մարզի Աշտարակ քաղաքի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկը:

Պետք է նշել, որ ստորև ներկայացված Աղյուսակ 6-ում և Աղյուսակ 7-ում ներկայացված հուշարձանները առկա չեն Աշտարակ քաղաքի Սուրբ Սարգսի փողոց N 73/6-73/8 հասցեում նախատեսվող Բազմաբնակարան բնակելի շենքերով բնակելի թաղամասի և հասարակական օբյեկտների կառուցման և հարակից տարածքներում:

Աղյուսակ 6.

Հուշարձանի համարը	Հուշարձանի ենթահամարը (ենթահամարները)	Հուշարձանախումբը, հուշարձանը	Ժամանակը	Տեղը բնակավայրի նկատմամբ, հասցեն	Նշանակությունը (հանրապետական, տեղական)	Ծանոթագրություն ²	
1	2	3	4	5	6	7	8
1		ԱՇՏԱՐԱԿ	4-5 դդ.	քաղաքի հվ-աե մասում,	Հ	1	
2		ԳԵՐԵԶՍԱՆՈՑ	13-20 դդ.	քաղաքի հս-աե մասում,	Հ	13: Ենթակայությամբ	
	2.1	Խաչքարեր	11-12 դդ.	Ս. Խաչատրյանի տնամերձ	Հ	3 հատ (13.2-13.3, 13.7)	
3		ԴԱՄԲՐԱՆԱԴԱՇՏ	Ք.ա. 2 հազ.	քաղաքի հս-աե մասում	Հ	14: «Խոջաբաղեր»	
4		ԵԿԵՂԵՑԻ ԾԻՐԱՆԱԿՈՐ	5 դ.	քաղաքի մեջ, Բերդաթա-	Հ	16: Ենթակայությամբ	
5		ԵԿԵՂԵՑԻ	13 դ.	քաղաքի մեջ, Բերդաթա-	Հ	19	
6		ԿԱՍՈՒՐԶ	10 դ.	քաղաքի աե մասում	Հ	20	
7		ԿԱՍՈՒՐԶ	1664 թ.	քաղաքի աե մասում	Հ	21	
8		ՀՆՁԱՆ	19 դ.	քաղաքի հվ-ամ մասում,	Տ	22	
9		ՀՆՁԱՆ	19 դ.	քաղաքի հս-ամ մասում,	Տ	23	
10		ՀՈՒՇԱՍՅՈՒՆ ԱՐՏԵՄԻ	1990 թ.	Ն. Սիսակյան փող.	Տ	24	
11		ՀՈՒՇԱՐՁԱՆ ԵՐԿՐՈՐԴ	1974 թ.	քաղաքի մեջ	Տ	25	
12		ՀՈՒՇԱՐՁԱՆ ՆՈՐԱՅՐ	1987թ.	Ն. Սիսակյան փող.	Տ	26	
13		ՀՈՒՇԱՐՁԱՆ ՎԱՆԻ 1915	1980 թ.	քաղաքի ամ մասում,	Հ	27	
14		ԶՐԱՆՑՔ «ԱՎԱՆԱՏԵՄԻ	Ք.ա. 8-7 դդ.	քաղաքի աե մասում	Հ	29	
15		ՏԱՊԱՆԱՔԱՐ	1751 թ.	քաղաքից 500 մ աե,	Հ	30	
16		ՏՈՒՆ - ԹԱՆԳԱՐԱՆ	19 դ., 1948 թ.	Պռոշյան փող.10	Տ	31	
	16.1	Հուշարձան Պերձ	1948 թ.	տուն-թանգարանի բակում	Տ	31.1	
17		ՏՈՒՆ - ԹԱՆԳԱՐԱՆ	19 դ. վերջ	Ղափանցյան փող. 25	Տ	32	
18		ՔԱՐԱՅՐ -	16-17 դդ.	Սբ. Սարգիս եկեղեցուց հվ	Հ	4 քարայր (18.4- 18.7)	

² Սույն ցուցակի ծանոթագրության սյունակում (թիվ 8) տրվում են 4-րդ սյունակում ներկայացված հուշարձանների և ենթահուշարձանների համարները պետական ցուցակի (կրճատ՝ պետ. ցուցակ) համաձայն: Անհրաժեշտության դեպքում ներկայացվում է նաև լրացուցիչ տեղեկատվություն հուշարձանի առանձին հատկանիշների (տեղ, վիճակ, բնութագրական օբյեկտների առկայություն և այլն) վերաբերյալ: Ցուցակը օտարման ոչ ենթակա այլ ենթահուշարձանների (խաչքար, տապանաքար և այլն) անվանումներով չծանրաբեռնելու նպատակով ծանոթագրության մեջ ներկայացվում են նաև դրանց քանակական տվյալները և պետական ցուցակի ենթահամարները:

Աղյուսակ 7.

Հուշարձանի համարը	Հուշարձանի Ենթահամարը			Հուշարձանախումբը հուշարձանը	Ժամանակը	Տեղը բնակավայրի նկատմամբ	Նշանակությունը, հանրապետական/ տեղական	Ծանոթագրություն
	2	3	4					
1.				ԱՇՏԱՐԱԿ« ՈՒԼԱՏԻՏԻԿ	4-5դդ.	հվ-աե մասում	Հ	համանուն բլրի վրա. Քասախի կիրճի ձախ լանջին, միջնադարյան կամրջի մոտ
2.				ԲԱՂՆԻՔ	1900 թ.	քաղաքի մեջ (այսուհետև՝ ք.մ.)	Տ	
3.				ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	1888 թ.	Աբովյան փող. 22	Տ	
4.				ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	19 դ.վրջ	Ալազանի փող.19-23	Տ	բժիշկ Մանդրոյի
5.				ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	1910 թ.	Ն. Աշտարակեցու հրապարակ	Տ	Վարդազարենց
6.				ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	1904 թ.	Էմին Հակոբյան փող, 2	Տ	Կոկոլենց Աթոյի
7.				ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	19 դ.վրջ	Ղափանցյան փող., 14	Տ	Եսայու
8.				ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	19 դ.վրջ	Ղափանցյան փող., 18	Տ	
9.				ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	20 դ. սկզբ	Ղափանցյան փող., 20	Տ	Միրեկանի
10.				ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	1837 թ.	Մաժումյան փող., 1	Տ	Թաթունենց Թաթոյի
11.				ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	1895 թ.	Մաժումյան փող., 12	Տ	Հաջի աղայի
12.				ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	1896 թ.	Մաժումյան փող., 34	Տ	Բեզլարենց
13.				ԳԵՐԵՁՄԱՆՈՑ	13-20 դդ.	հս-աե մասում	Հ	Քաղաքի եզրին, Ապարան տանող ճանապարհի աջ կողմում
	13.1			խաչքար	9-10 դդ.		Հ	հվ մասում
	13.2			խաչքար	11-12դդ.		Հ	Ա. Խաչատրյանի հողամասում

13.3			խաչքար	11-12դդ.		Հ	Ա. Խաչատրյանի հողամասում
13.4			խաչքար	13դ.		Հ	որմնափակ, վրերգ 1954 թ., ճարտ.՝ Շ. Ազատյան
13.5			խաչքար	13դ.		Հ	որմնափակ, վրերգ 1954 թ., ճարտ.՝ Շ. Ազատյան
13.6			խաչքար	13դ.		Հ	որմնափակ, վրերգ 1954 թ., ճարտ.՝ Շ. Ազատյան
13.7			խաչքար	13դ.		Հ	Ա. Խաչատրյանի հողամասում
13.8			խաչքար	13դ.		Հ	աե մասում, ստորին մասը կտրված
13.9			խաչքար Գրիգոր և Վարդուսան ամուսինների	1225 թ.		Հ	աե մասում, քառաստիճան պատվանդանին
13.10.			խաչքար Սադուն իշխանի և նրա զավակների (Օակքար)	1268 թ.		Հ	
13.11.			խաչքար Գրիգորի, Նազի, Սետայի	1273 թ.		Հ	եռաստիճան պատվանդանին
13.12.			խաչքար Վերգինի	1461 թ.		Հ	կնտ.-ական մասում, հենած տապանաքարի, ստորին մասը չի պահպանվել
13.13.			խաչքար Կարապետին	16-17 դդ.		Հ	հս-ամ մասում, քիվը՝ ջարդոտված, կանգնեցված եռաստիճան բարձր պատվանդանին. 3 խաչքարերից ձախակողմյանը
13.14.			խաչքար Վիրապի, Մկրտչի	16-17 դդ.		Հ	հս-ամ մասում, կանգնեցված եռաստիճան բարձր պատվանդանին. 3 խաչքարերից կենտրոնականը
13.15.			խաչքար Գուֆաշի, Շնահրի	1602 թ.		Հ	հս-ամ մասում, կանգնեցված եռաստիճան բարձր պատվանդանին. 3 խաչքարերից աջակողմյանը

	13.16.		խաչքար Ուքանի	1631 թ.		չ	հվ-ամ մասում, քիվի վերին աջ անկյունը՝ կոտրված
	13.17.		տապանաքար	1598 թ.		չ	
	13.18.		տապանաքար Բարեկի	1757 թ.		չ	
	13.19.		տապանաքար Եղսանի	1771 թ.		չ	
	13.20.		տապանաքար	1781 թ.		չ	
	13.21.		տապանաքար Հարությունի	1791 թ.		չ	
	13.22.		տապանաքար Տեր Հարություն Շահազիզյանի (Աշտարակեցու)	1801 թ.		չ	Ներսես Աշտարակեցու հոր տապանաքարն է:
14.			ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ «ԽՈՋԱԲԱՂԵՐ»	մթա 2 հզմ	հս-աե մասում	չ	
15.			ԵԿԵՂԵՑԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ (ԿԱՐՍՐԱՎՈՐ)	7 դ.	հս-աե մասում	չ	
	15.1		գերեզմանոց	7-19 դդ.		չ	եկեղեցու բակում
		15.1.1	խաչքար	11 դ.		չ	եկեղեցու բակում, ընկած գետնին, ստորին ձախ անկյունը՝ կոտրված
		15.1.2	խաչքար« Հագախաչ»	12 դ.		չ	եկեղեցու պարսպի հվ-ամ մուտքի ձախ կողմում, քառաստիճան պատվանդանին. արձանագիր
		15.1.3	խաչքար Թագուհու	1184 թ.		չ	երկաստիճան պատվանդանին կանգնեցված 3 խաչքարերից կենտրոնականը կազմող՝ Արքա

		15.1.4	խաչքար	12-13 դդ.		չ	երկաստիճան պատվանդանին կանգնեցված 3 խաչքարերից ձախակողմյանը
		15.1.5	խաչքար	12-13 դդ.		չ	երկաստիճան պատվանդանին կանգնեցված 3 խաչքարերից աջակողմյանը
		15.1.6	խաչքար	13 դ.		չ	թերի
		15.1.7	խաչքար	15 դ.			
		15.1.8	խաչքար Ասադինին, պարոն Դալին	16 դ.		չ	եկեղեցու բակում, կանգնեցված բարձր պատվանդանին, կազմող՝ Մարգիս
		15.1.9	խաչքար	16 դ.		չ	եկեղեցու պարսպի տակ
		15.1.10.	խաչքար Հովսեփի	1598 թ.		չ	եկեղեցու պարսպի տակ, կազմող՝ Հրայպետ
		15.1.11.	խաչքար Մկրտիչ վարդապետ Շահագիզյանի	1832 թ.		չ	եկեղեցու պարսպի տակ, վերին ձախ և ստորին աջ անկյունները՝ կտորված
		15.1.12.	տապանաքար	1811 թ.		չ	պարսպի հվ մուտքից ձախ
		15.1.13.	գերեզման եմինի Գևորգ	1998 թ.			ճարտ.՝ Շ. Սոլախյան
	15.2		պարիսպ	1254 թ.		չ	
16.			ԵԿԵՂԵՑԻ ԾԻՐԱՆԱՎՈՐ	5 դ.	ք.մ., Բերդաթաղում	չ	կիրճի եզրին, կիսավեր
	16.1		կոթող	7 դ.		չ	բեկոր՝ հենած հվ պատին
	16.2		կոթող	7 դ.		չ	բեկոր՝ եկեղեցու հվ-աե անկյունում
	16.3		կոթող	7 դ.		չ	բեկոր
	16.4		կոթող	7 դ.		չ	եկեղեցուց 4 մ աե
	16.5		խաչքար	11-12 դդ.		չ	եկեղեցու ներսում, հենած պատին

	16.6		խաչքար	13 դ.		Հ	բեկոր, եկեղեցու ներսում
	16.7		տապանաքար	1701 թ.		Հ	հվ պատի շարվածքում
17.			ԵԿԵՂԵՑԻ ՄԱՐԻՆԵ Ս.	1281 թ.	ք.մ.	Հ	բարեկարգված 1977 թ., նախագծի ճարտ.՝ Գ.Գյուրջյան
	17.1		գերեզմանոց	17-19 դդ.		Հ	եկեղեցու ամ կողմում
	17.2		խաչքար	1291 թ.		Հ	եկեղեցու բակում, երկաստիճան պատվանդանին
18.			ԵԿԵՂԵՑԻ Ս.ԱԱՐԳԻՍ	13 դ.	հվ-աե մասում	Հ	վրկնգ.՝ 1985 թ., ճարտ.՝ Հ.Գասպարյան
	18.1		գերեզմանոց	15-19 դդ.		Հ	եկեղեցու շուրջը
	18.2		պարիսպ	15 դ.		Հ	
	18.3		խաչքար	16-17 դդ.		Հ	եկեղեցու ներսում, արձանագիր, կոտրված
	18.4		քարայր-կացարան	16-17 դդ.		S	եկեղեցուց 20 մ հվ-ամ
	18.5		քարայր-կացարան	16-17 դդ.		S	եկեղեցուց 15 մ հվ-ամ
	18.6		քարայր-կացարան	16-17 դդ.		S	եկեղեցուց 25 մ հվ-աե
	18.7		քարայր-կացարան	16-17 դդ.		S	եկեղեցուց 10 մ հվ
19.			ԵԿԵՂԵՑԻ ՍՊԻՏԱԿԱՎՈՐ	13 դ.	ք.մ., Բերդաթաղում	Հ	կիրճի եզրին, կիսավեր
20.			ԿԱՄՈՒՐԶ	10 դ.	աե մասում	Հ	
21			ԿԱՄՈՒՐԶ	1664 թ.	աե մասում	Հ	պատվիրատու՝ մահուտսի խոջա Գրիգոր
22.			ՀՆՁԱՆ	19 դ.	հվ-ամ մասում	S	Աշտարակ-Օջակյան խճուղուց ձախ, Մինասի Մացակայի հողամասում
23.			ՀՆՁԱՆ	19 դ.	հս-ամ մասում	S	Աշտարակ-Օջակյան խճուղուց աջ. Ղազիկենց հողամասում

24.			ՀՈՒՇԱՍՅՈՒՆ՝ ԱՐՏԵՍԻ ԱՅՎԱԶՅԱՆԻՆ	1990 թ.	Ն. Միսակյան փող.	S	
25.			ՀՈՒՇԱՐՁԱՆ՝ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒ Մ ՋՈՂՎԱԾՆԵՐԻՆ	1974 թ.	ք.մ.	S	ճարտ.՝ Վ. Թասլակյան
26.			ՀՈՒՇԱՐՁԱՆ ՆՈՐԱՅՐ ՄԻՍԱԿՅԱՆԻ	1987 թ.	Ն. Միսակյան փող.	S	ճարտ.՝ Գ. Գյուրջյան, քանդ.՝ Ա. Ավագյան
27.			ՀՈՒՇԱՐՁԱՆ՝ ՎԱՆԻ 1915 թ. ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻՆ	1980 թ.	ամ մասում	Հ	քաղաքի ամ եզրին, Աշտարակ-Թալին մայրուղու ձախ կողմում, ճարտ. Ջ. Թորոսյան
28.			ԶՐԱՂԱՑՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐ	19 դ. վրջ	Աբովյան փող., 2	S	միջնադարյան կամրջի մոտ, վրկնգ.՝ 1983 թ., ճարտ.՝ Գ. Գյուրջյան
29.			ԶՐԱՆՅՔ« ՄԱՅՐ ԱՌՈՒ (ԱԿԱՆԱՏԵՍԻ ԱՌՈՒ)	մթա 8-7 դդ.	ան մասում	Հ	
30.			ՏԱՊԱՆԱՔԱՐ« ՆԱՀԱՏԱԿԻ	1751 թ.	0,5 կմ ան	Հ	Քասախի կիրճում, «Դարաքավոր» այրերի մոտ. Քասախի աջակողմյան դարավանդին
31.			ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆԻ ՇԵՆՔ. ՊԵՐՃ ՊՈՌՇՅԱՆԻ ՏՈՒՆ- ԹԱՆԳԱՐԱՆԸ	19 դ., 1948 թ.	Պռոշյան փող., 10	S	վրկնգ.՝ 1986 թ.
	31.1		Խուշարձան Պերճ Պռոշյանի	1948 թ.		S	տուն-թանգարանի բակում, քանդ.՝ Ա. Ատեփանյան

32.			ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆԻ ՇԵՆՔ. ՆՈՐԱՅՐ ՄԻՍԱԿՑԱՆԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆԸ	19 դ.վրջ	Ղափանցյան փող., 25	Տ	վրկնգ.՝ 1989 թ.
33.			ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ «ՎԵՐԻՆ ՆԱՎԵՐ»	Ք.ա. 2-1 հազ.	քաղաքից մոտ 2.5 կմ ամ, Աշտարակ-Գյումրի ճանապարհից 20-30 մ հվ	Հ	Փարսի գյուղի «Վերին Նավեր» դամբարանադաշտի (պետ. ցուցակ՝ 2.110.2) աե հատվածի մեծ դամբանաբլուրներն են
34.			ՀՆՁԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐ	4-13 դդ.	քաղաքի հս-աե մասում, Հնձանաբազեր վայրում	Հ	պեղվել է 4 հնձան
35.			ՔԱՐԱՅՐ-ԿԱՑԱՐԱՆՆԵՐ «ԴԱՐԱԲԱՎՈՐ»	միջնադար	Քասախի կիրճում	Հ	համալիրի մաս կազմող «Նահատակի» տապանաքարը պետ. ցուցակում ներկայացված է իբրև առանձին հուշարձան (2.1-30)

*Հուշարձանների պետական ցուցակը կազմելիս հիմք է ընդունվել «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կառուցվածքը մարզի և բնակավայրերի նույն համարակալմամբ:

5.10 Սոցիալ տնտեսական պայմանները

Ուսումնասիրվող տարածքը գտնվում է ՀՀ Արագածոտն մարզի Աշտարակ համայնքում: Համայնքի բնակչությունը թվաքանակը 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ, համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների կազմում է՝ 72269 մարդ:

Աշտարակ միավորված համայնքի կազմում են գտնվում Աշտարակ, Ագարակ, Աղձք, Անտառուտ, Ավան, Արագածոտն, Արուճ, Արտաշավան, Բազմադրյուր, Բյուրական, Դպրևանք, Լեռնարոտ, Կարբի, Կոշ, Ղազարավան, Նոր Ամանոս, Նոր Եղեսիա, Նոր Երզնկա, Ոսկեհատ, Ոսկեվազ, Մաղմուսավան, Մասունիկ, Վերին Մասունիկ, Տեղեր, Ուշի, Ուջան, Փարպի, Օհանավան, Օշական, Օրգով բնակավայրերը:

Համայնքում առաջնային են համարվում աշխատանքային ռեսուրսների լիարժեք օգտագործումը, խմելու եւ ոռոգման ջրի ջրագծերի վերանորոգումը, փողոցային լուսավորության խնդիրը, քաղաքի գազաֆիկացումը: Աշտարակ քաղաքը Երևան քաղաքից գտնվում է 22կմ հեռավորության վրա: Հանդիսանում է տրանսպորտային հանգույց: Այստեղով են անցնում Երևան-Աշտարակ-Թալին, Երևան-Աշտարակ-Ապարան միջպետական նշանակության ավտոմայրուղիները:

Աշտարակը հայկական աղբյուրներում հիշատակվում է 9-րդ դարից: Հնում մտել է Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Արագածոտն գավառի մեջ: Այստեղ կան վաղ ժամանակների վերաբերող պատմամշակութային կոթողներ: Այստեղ 5-րդ դարում կառուցվել է Ծիրանավոր եկեղեցին, որը 18-րդ դարում վերանորոգվել է: Եկեղեցու շրջակայքը տեղացիները անվանում են «Բերդաթաղ»: 7-րդ դարում կառուցվել է ս. Աստվածածին եկեղեցին, որը տեղացիները անվանում են Կարմրավոր՝ կարմիր քարով կառուցված լինելու պատճառով: Քաղաքի կենտրոնում է գտնվում ս. Մարինե եկեղեցին՝ 1281թ: Հիշատակության է արժանի Քասաղի եռակամար կամուրջը, որը կառուցվել է քանաքեռցի մեծահարուստ Մահտեսի խոջա Գրիգորի կողմից 1664 թ: Մուղնի գյուղում է գտնվում ս. Գեորգի վանքը՝ 17-րդ դար:

Քաղաքի առկա բնակչությունը 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմում է 16674 մարդ՝ համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների, որից 47% տղամարդիկ են, 53%՝ կանայք: Աշտարակը ունի միջնակարգ դպրոցներ, երաժշտական եւ մարզական դպրոցներ, մանկապարտեզներ, մշակույթի տուն, գրադարաններ, մարզադաշտ, հիվանդանոց, պոլիկլինիկա, կապի հանգույց:

Աշտարակում է գտնվում Հայաստանի Գիտությունների Ակադեմիայի ռադիոֆիզիկայի եւ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտը: Տնտեսության մեջ կարեւոր տեղ է զբաղեցնում արդյունաբերությունը: Այստեղ կան տարբեր ճյուղերի ձեռնարկություններ: Ունի պոլիէթիլենային տարաների արտադրություն, պոլիգրաֆիական գործարան, որը զբաղվում է տպագրական իրերի արտադրությամբ: Զարգացած է սննդի արդյունաբերությունը: Այստեղ կան խաղողի վերամշակման եւ զինու հումքի ստացման կետեր: Հնուց Աշտարակը հայտնի է անուշահամ գինիների եւ չոր մրգերի պատրաստմամբ:

Գյուղատնտեսությունը նույնպես զարգացած է, հատկապես պտղաբուծությունը եւ խաղողագործությունը: Հողահանդակները հիմնականում ոռոգվում են Քասաղի ջրերով: Մշակում են հացահատիկային, բանջարաբոստանային կուլտուրաներ: Զբաղվում են խոշոր եղջերավոր անասնապահությամբ, թռչնաբուծությամբ: Ունի թռչնի մսի եւ ձվի արտադրություն:

6 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

6.1 Ռիսկերի գնահատում

Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա կդրսևորվեն որոշակի անբարենպաստ ազդեցություններ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ: Ազդեցությունները իրենց բնույթով կլինեն սահմանափակ, կարճատև և պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքներով:

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցումը կատարվելու է ՀՀ գործող շինարարական նորմերին և պահանջներին համապատասխան, մասնավորապես ՀՀՇՆ 30.01-2014թ. «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական վայրերի հատակագծում և կառուցապատում», ՀՀՇՆ 30.01-2014թ. «Բնակելի շենքեր. մաս 1-ին, բազմաբնակարան բնակելի շենքեր», ՀՀՇՆ 30.01-2014թ.«Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն», ՀՀՇՆ IV-11.03.-2002 «Ավտոկայանատեղեր», ՀՀՇՆ 11-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանություն»:

Շինարարության փուլում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները և ռիսկերը հիմնականում պայմանավորված են արտանետումներով, որոնք կարող են առաջանալ՝

- Նոր կառուցվող շենքերի շինարարության ընթացքում
- Հիմքերի փորման ընթացքում
- Դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:
- Հողային զանգվածների և շինադրի տեղափոխման հետ կապված,
- Շինարարական տեխնիկայի շահագործմամբ,
- Բետոնային աշխատանքների իրականացմամբ,
- շինհրապարակների տեղադրման և վառելիքաքսայուղերի պահեստավորման հետ կապված,
- Շինարարության ընթացքում մեքենաների և տեխնիկայի տեղաշարժից մերձակա բնակչությանը պատճառվող անհանգստությամբ
- Շինարարական տեխնիկայի շահագործման ընթացքում աղմուկի մակարդակի ավելացմամբ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու և փոխհատուցելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

6.2 Օդի աղտոտում

Բնակելի և հասարակական շենքերով թաղամասի կառուցման շինարարական աշխատանքների և առկա շինությունների քանդման ընթացքում հիմնականում

կանխատեսվում է օդի աղտոտում՝ պայմանավորված անօրգանական փոշու և ծխագազերի ժամանակավոր արտանետումներով, որոնք առաջանում են տեխնիկական միջոցների աշխատանքից՝ դիզվառելիքի աշխատանքի դեպքում:

Հողային աշխատանքներ

Հողային աշխատանքների ժամանակ առաջանում են փոշու արտանետումներ: Դրանք առաջանում են փորման-բեռնման աշխատանքների արդյունքում՝ հիմնականում էքսկավատորների, ամբարձիչների և բուլդոզերների աշխատանքի ժամանակ: Փորման-բեռնման աշխատանքները իրականացվում են՝

6 տարի x 14 ամիս x 22 օր/ամիս x 8 ժամ/օր = 14784 ժամ (1848 օր):

Հաշվարկները կատարված են համաձայն “ВРЕМЕННОЕ МЕТОДИЧЕСКОЕ ПОСОБИЕ ПО РАСЧЕТУ ВЫБРОСОВ ОТ НЕОРГАНИЗОВАННЫХ ИСТОЧНИКОВ В ПРОМЫШЛЕННОСТИ СТРОИТЕЛЬНЫХ МАТЕРИАЛОВ”, Минпромстрой СССР, 1987 մեթոդակարգի հետևյալ բանաձևի.

$Q \Phi. \text{Բ.} = (P1 \times P2 \times P3 \times P4 \times P5 \times G \times P6 \times B) \times 106/3600$ տ/ժամ, որտեղ (նշված մեթոդակարգի աղյուսակ 1)

P1 – փոշու ֆրակցիայի բաժնեմասն է, ընդունվում է 0.05

P2 – 0-50 մ/կմ չափերով մասնիկների բաժնեմասն է տարածվող փոշու ակտիվություն, 0.02

P3 - գործակից, որը հաշվի է առնում շինարարական տեխնիկայի աշխատանքի գոտում քամու արագությունը, 1.0,

P3 - գործակից, որը հաշվի է առնում շինարարական տեխնիկայի աշխատանքի գոտում քամու արագությունը, 2.5,

P4- գործակից, որը հաշվի է առնում նյութի խոնավությունը, 0.41

P5 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոշորությունը, 0.5

P6 - գործակից, որը հաշվի է առնում տեղանքի պայմանները, 1.0

G – հանվող հողային զանգվածը, 52000 մ³ ամբողջ շինարարության ընթացքում, կամ հաշվի առնելով գրունտերի զանգվածների միջին տեսակարար կշիռը՝ 83200 տ:

Ժամում հանվող տեղափոխվող գրունտի քանակը կկազմի՝

83200 տ : 14784 ժամ/շին. ժամանակամիջոց = 5.6 տ/ժամ.:

B - գործակից, որը հաշվի է առնում նյութի թափման բարձրությունը, 0.6

¹ Հաշվի առնելով նաև ջրցանը

$$Q_{\text{Փ.Բ.}} = 0.05 \times 0.02 \times 2.5 \times 0.4 \times 0.5 \times 5.6 \times 1.0 \times 0.6 \times 10^6 / 3600 = 0.46 \text{ գ/վրկ, կամ}^{\cdot}$$

$$0.46 \times 3600 \times 1848 : 10^6 = 3.06 \text{ տ/շին. ժամանակամիջոց:}$$

Շինարարության ընթացքում վերը նշված արտանետումները կլինեն տեղայնացված, ենթակա արագ ցրման և ժամանակավոր՝ հաշվի առնելով շինարարական աշխատանքների ժամանակավոր բնույթը: Հնարավոր վնասակար ազդեցությունները կբացառվեն կամ կնվազեցվեն բնապահպանական կառավարման պլանում ներկայացված միջոցառումների իրականացման դեպքում, մասնավորապես՝ փոշու արտանետումները նվազեցնելու համար կիրականցվի՝

- շինհրապարակի պարբերաբար ջրցանում,
- սորուն շինարարական նյութեր տեղափոխող մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի թափքի ծածկման պայմաններում,
- շինարարական աղբի տեղափոխման համար օգտագործվելու է փակ ծածկ ունեցող մեքենաներ
- շին հրապարակ մուտք գործող և դուրս եկող մեքենաների անվաղողերի լվացում տարվա չոր եղանակային պայմանների դեպքում
- շինհրապարակում սորուն նյութերը պահեստավորվելու են շինանյութի համար նախատեսված ժամանակավոր պահեստներում կամ ծածկվելու են անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով,
- շինհրապարակը առանձնացվելու է մետաղաթիթեղյա ցանկապատով կամ հատուկ մեկուսիչ թաղանթով,
- շինարարական հրապարակում նախատեսվելու թափոնների ժամանակավոր կուտակման վայրեր,
- բացառվելու է տարածքում թափոնների բաց այրումը,
- օգտագործվող տեխնիկան, սարքավորումները և տրանսպորտային միջոցներն օգտագործվելու են միայն սարքին վիճակում,
- բացառվելու են անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը: Այդ նպատակով իրականացվելու են պարբերաբար ստուգումներ:
- Հարակից բնակելի և հասարակական շենքերից բողբոջների դեպքում կիրականացվի նաև օդի աղտոտվածության գործիքային չափումներ, որոնք կհամեմատվեն օրենսդրական նորմերի և ելակետային տվյալների հետ:

Նշված միջոցառումների իրականացման արդյունքում օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի նախատեսվում:

6.3 Հողերի Աղտոտում

Գործունեության ենթակա տարածքը խառը կառուցապատման գոտում գտնվող կիսաբարեկարգ տարածք է, ռելիեֆը հիմնականում հարթ է:

Համաձայն նախագծային լուծումների՝ նախատեսվող գործունեության իրականացման համար նախատեսվում է 52000 խմ ծավալի հողային աշխատանքներ: Հողային զանգվածն

առաջանալու է շենքի հիմքերի փորման, ներտարածքային ճանապարհների կառուցման, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցման համար նախատեսվող աշխատանքներից: Տարածքում շինություններից ազատ տեղամասերում նկատվող հողի բուսաշերտը՝ 640 խմ նախատեսվում է օգտագործել կանաչապատման աշխատանքների իրականացման ժամանակ:

Հողային ռեսուրսներն աղտոտումից պահպանելու համար նախատեսվում է.

- հողային աշխատանքների արդյունքում հանված հողային գրունտը մինչև օգտագործելը պահվելու է շինհրապարակում, առանձնացված վայրում՝ ծածկված անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով,
- շինարարական աշխատանքների ընթացքում հանված հողային գրունտն օգտագործվելու է տարածքի հարթեցման և բարեկարգման նպատակով,
- շինարարական հրապարակն ապահովված է լինելու արտահոսքը կանխող/մաքրող սարքավորումներով՝ հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար,
- շինարարական նյութերը տեղադրվելու են հատուկ տակդիրների կամ անջրթափանց հիմքով բետոնապատ մակերեսների վրա,
- նվազագույնի է հասցվելու շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը,
- ավտոմեքենաները շինհրապարակից դուրս են գալու միայն մաքուր վիճակում՝ շրջակա տարածքը չաղտոտելու նպատակով,
- շինարարության փուլում օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը կատարվելու է տարածքից դուրս:
- Հողի բերրի շերտի առանձնացումը պահեստավորումն ու հետագա տեղադրումն իրականացվելու է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

6.4 Աղմուկի և թրթռումների ազդեցություն

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է N2-III-11.3՝ «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» սանիտարական նորմերով: Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին: Համապատասխան բնապահպանական միջոցառումների կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը՝ հաշվի առնելով առկա ազդակիր շինությունների (բնակելի և հասարակական շենքեր, հյուրանոցային համալիր) հեռավորությունը շինտարածքից (մոտ 40-200մ): Հարակից տների և շենքերի բնակչության հնարավոր բողոքների դեպքում կիրականացվեն աղմուկի և թրթռումների մակարդակների գործիքային

չափագրումներ, իսկ շինարարության ընթացքում որպես կարևորագույն միջոցառումներ, անհրաժեշտ է՝

- Խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց մասնավոր բնակելի տներո, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերի հարևանությամբ;
- Աղմուկ առաջացնող աշխատանքները հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին:
- Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:
- Բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը:

6.5 Արտակարգ իրավիճակներ.

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակների ռիսկերի առաջացում՝ կապված բնական աղետների, սողանքների, հրդեհների, հեղուկ նյութերի արտահոսքի և շահագործվող շիտեխնիկայի վթարների հետ:

Գործունեության իրականացման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվում է.

- կառույցների հիմքերի փոստրակները բացելուց և նախագծային նիշերին հասնելուց հետո՝ պարտադիր է ինժեներ-երկրաբանի կողմից հիմնափոսի զննումը և համապատասխան մասնագետի(երկրաբան) կողմից կազմված եզրակացությունը,
- տեղադրվելու են տեղեկատվական ցուցանակներ, որը ներառելու է շենքի նախագծողի, շինարարի և վերահսկողի վերաբերյալ տեղեկատվություն (անվանում, կոնտակտային տվյալներ և այլն), շինթույլտվության, շինարարության սկզբի և ավարտի վերաբերյալ տեղեկատվություն:
- շինհրապարակը կազմակերպվելու է հակահրդեհային անվտանգության պաշտպանության կանոններին համապատասխան,
- շինհրապարակն ապահովված է լինելու հակահրդեհային կրակմարիչներով, տեսահսկման և ազդանշանային համակարգերով, հակահրդեհային միջոցառումների վահանակներով,
- շինհրապարակն, ինչպես նաև բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունները ժամանակ առ ժամանակ մաքրվելու են հրդեհավտանգ և պայթյունավտանգ թափոններից և աղբից,
- հակահրդեհային միջտարածությունները չեն օգտագործվելու նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,

- բաց են լինելու նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները, տեղադրվելու են դրանց մոտեցման համապատասխան ցուցանակներ,
- տեղադրվելու են ձայնային ազդանշաններ, հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ՝ վթարների կանխարգելման համար,
- հեղուկ և վտանգավոր նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,
- մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցվելու են:

Շահագործման փուլում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրն ապահովված է լինելու հակահրդեհային կրակմարիչներով, օդափոխության, ավտոմատ հրշեջ ազդանշանային՝ հակաձխային, արտածման համակարգերով, էվակուացիոն ուղիներով և ելքերով, աստիճանավանդակի, վերելակի դռները լինելու են հակահրդեհային՝ ինքնավակվող, համալիրի ստորգետնյա հատվածում, որտեղ նախատեսվում են ավտոկայանատեղիներ, օգտագործվելու են պաշտպանական նպատակով՝ անհրաժեշտության դեպքում բնակիչների պատսպարելու համար, ստորգետնյա հատվածում՝ ապաստարանի համար նախատեսվում է վթարային ելք:

6.6 Ջրօգտագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն

Կառուցապատվող տարածքում չկան մակերևութային ջրային ավազաններ կամ առուներ: Ուստի մակերևութային և գրունտային ջրերի վրա ուղղակի ազդեցություն չի կանխատեսվում: Շինարարական աշխատանքները կատարվելու են առանձնացված շինհրապարակի ներսում, ինչը կբացառի հնարավոր արտահոսքերը և արտանետումները դեպի մակերևութային և/կամ ստորերկրյա ջրային ռեսուրսներ:

Շինարարական աշխատանքների ընթացքում ջուրը հիմնականում օգտագործվելու է շինհրապարակի ջրցանման, մաքրման և որոշ շինարարական աշխատանքների իրականացման համար, ինչպես նաև կապալառուի աշխատակազմի կենցաղային կարիքները հոգալու նպատակով: Աշխատողների խմելու և կենցաղային նպատակների համար անհրաժեշտ ջրաքանակը շին հրապարակ կմատակարարվի տարածքում գոյություն ունեցող ջրամատակարարման ցանցից:

Շինարարական հրապարակի ջրցանման, մաքրման, որոշ շինարարական աշխատանքների կազմակերպման համար անհրաժեշտ որակի ջրաքանակի ապահովումը նախատեսվում է իրականացնել մեքենաներով բերելու եղանակով՝ (մինչ շինարարական աշխատանքների մեկնարկը կապալառու կազմակերպությունը համապատասխան

պայմանագիր կկնքի ջրօգտագործման թույլտվություն ունեցող ջրամատակարար կազմակերպության հետ):

ա) Աշխատողների խմելու և կենցաղային նպատակներով ջրածախսը հաշվարկվում է հետևյալ բանաձևով`

$$W = (n \times N + n_1 \times N_1) T$$

Որտեղ` n - տեխնիկական աշխատողների և ծառայողների թիվն է

N - ջրածախսի նորման` - 0.016մ³,

N_1 - բանվորների թիվն է,

N_1 - ջրածախսի նորման բանվորների համար` - 0.025մ³/մարդ օր<

T – տարեկան աշխատանքային օրերի թիվը` 260 օր:

Աշխատողների թիվը շինարարության ընթացքում նախատեսվում է`

- Ինժեներատեխնիկական անձնակազմ - 2 մարդ,
- Արհեստագործներ և բանվորներ - 47 մարդ,
- Մեքենավարներ և օգնականներ - 10 մարդ:

Այսպիսով` $W = (2 \times 0.016 + 57 \times 0.025) \times 260 = 378.82$ մ³/տարի, միջին օրեկան 1.46 մ³:

6 տարվա ընթացքում` 2272.92 մ³:

բ) Արտադրական նպատակներով ջրի ծախսը պայմանավորված փոշեառաջացման օջախների ջրմամբ:

Այդ ծախսը որոշվում է հետևյալ բանաձևով`

$$V_1 = S \times K \times T \times K_1,$$

Որտեղ` S - թրջվող մակերեսն է, երկու կամ երեք տեղամասերում, ընդամենը` 1400 մ²,

K - ջրցաման նորման – 0.0015մ³/1մ²

T – ջրցանի /չոր եղանակի/ տարեկան օրերը, 240 օր

K_1 – ջրցանի օրական քանակը, 2

Այսպիսով` $V_1 = 1400 \times 0.0015 \times 240 \times 2 = 1008.0$ մ³/տարի:

Միջին օրեկանը կազմում է 4.2 մ³: 6 տարվա ընթացքում` 6048.0 մ³:

գ) Հողային զանգվածի խոնավացում

Ընդամենը փորվելու և հանվելու է 52000.0 մ³ հողային զանգված: Խոնավացման նորմը ընդունվում է 8 լ/մ³:

$$52000 \text{մ}^3 \times 8 \text{լ/մ}^3 : 1000 \text{լ/մ}^3 = 416.0 \text{մ}^3$$

դ) Զրահեռացում

Տարածքների ջրցանի, հողային զանգվածների խոնավացման և տարածքի ոռոգման արդյունքում արտահոսք չի առաջանում:

Կեղտաջրեր առաջանում են միայն խմելու և կենցաղային ջրօգտագործման արդյունքում:

Կենցաղային կեղտաջրերի ծավալը հաշվարկվում է հետևյալ կերպ՝

$V_{1x} (1 - L)$, որտեղ L – կորստի գործակիցն է, ընդունվում է 5% (0.05)

$378.82 \times (1 - 0.05) = 359.879$ մ³/տարի, միջին օրեկան՝ 1.387 մ³/օր: 6 տարվա ընթացքում՝ 2159.274 մ³:

Շինարարությունը իրականացնող անձնակազմը օգտվելու է ժամանակավոր տնակներից, որոնք կտեղադրվեն մինչև շինարարական աշխատանքների սկիզբը:

Աղյուսակ 8. Ջրօգտագործման և ջրահեռացման ընդհանուր հաշվարկային ցուցանիշները

Ջրօգտագործման կարիքները	Ջրօգտագործում, մ ³ /տարի	Կորուստներ, մ ³ /տարի	Ջրահեռացում, մ ³ /տարի
Հարթակների ջրցան	1008.0	1008.0	-
Հողային զանգվածների խոնավացում	416.0	416.0	-
Խմելու և կենցաղային	378.82	18.941	359.879
Ընդամենը	1802.82	1442.941	359.879

Շինարարական աշխատանքների ընթացքում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու կամ կանխարգելու նպատակով նախատեսվում է.

- փոշենստեցման համար ջրցանը կատարվելու է ըստ անհրաժեշտության, հնարավորինս չառաջացնելով մակերևութային հոսքեր,
- տրանսպորտային միջոցների և սարքավորումների լվացման հոսքաջրերը ներքին բակային ցանցով ուղղվելու են շինհրապարակում տեղադրված տարողության մեջ,
- անձրևաջրերը և շինարարական հոսքաջրերը հեռացվելու են դեպի տարածքում տեղադրվող տարողություն,
- ջրցանման համար օգտագործվելու է միայն տեխնիկական որակի ջուր և տարողություններում հավաքված/ կուտակված ջուրը,
- շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների ժամանակավոր կայանումը իրականացվելու մակերևութային ջրային ռեսուրսներից հեռու
- շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումն իրականացվելու է համապատասխան մասնագիտացված կետերում,

- շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում՝ բետոնախառնիչ մեքենաներով՝ բացառելով շինարարական հրապարակում բետոնի խառնուրդի/շաղախի պատրաստումը:

Կեղտաջրերի հեռացման համար նախատեսվում է. շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող ժամանակավոր բիոզուգարանից և դրանց սպասարկումն իրականացվելու է համապատասխան մասնագիտացված կազմակերպության կողմից՝ պայմանագրային հիմունքներով: Շինարարական հրապարակում տեղադրված բիոզուգարանները շինաշխատանքների ավարտից հետո կապամոնտաժվեն:

Շահագործման փուլում բնակելի համալիրի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգը միացվելու է քաղաքային ջրամատակարարման և ջրահեռացման ցանցին:

6.7 Կենսաբազմազանություն

Բուսական աշխարհ. Շինարարական աշխատանքների ընթացքում բուսատեսակների և կենդանատեսակները վրա ազդեցություն չի նախատեսվում, քանի որ բոլոր աշխատանքները տեղի են ունենալու քաղաքային միջավայրում:

Կենդանական աշխարհ. գործունեության հարակից տարածքներն արդեն կառուցապատված են, ուստի մարդկային գործոնի, երթևեկության՝ մեքենաների շարժի, աղմուկի պայմաններում տարածքում բացակայում են կենդանատեսակները, ինչպես նաև կենդանիների բնադրավայրերը, միգրացիոն ուղիները:

Հաշվի առնելով, որ նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Աշտարակ քաղաքի բնակեցված և կառուցապատված թաղամասում, կենսաբազմազանությանը վտանգ չի սպառնում և բնապահպանական միջոցառումներ չեն նախատեսվում:

6.8 Թափոններ

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջանալու են՝

- Շինարարական աշխատանքների իրականացման ժամանակ, «շինարարական նյութերի մնացորդները շինարարական աղբի տեսքով (վտանգավորության IV դաս, ծածկագիր՝ 91200601 01 00 4) 420 խմ ծավալով և գոյություն ունեցող շինությունների քանդման արդյունքում առաջացող շինարարական աղբը (վտանգավորության IV դաս, ծածկագիր՝ 91200601 01 00 4) 110 խմ:

Ընդհանուր շինարարական աղբը կազմում է $110 + 420 = 530$ խմ

- կոշտ կենցաղային թափոններ՝ աղբ (ծածկագիր՝ 91200400 01 00 4) կառուցապատման փուլում՝ 42480 կգ/տարի:

Այս կարգի թափոնները համաձայն՝ ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ. դեկտեմբերի 25-ի N430-Ն հրամանի՝ ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկի՝ պատկանում են վտանգավորության 4 դասին, ինչպես նաև՝

- Քանդված հանված հողային զանգված՝ 10400 իւմ /ծածակագիրը՝ 31401100 08 99 5/, այս կարգի թափոնները համաձայն՝ ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ. դեկտեմբերի 25-ի N430-Ն հրամանի՝ ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկի՝ պատկանում են վտանգավորության 5 դասին,

Շինարարության փուլում կենցաղային աղբի հաշվարկները

Կենցաղային աղբի ծավալը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$M=n*m$$

m – 1 հերթափոխում կենցաղային աղբի ծավալն է մեկ մարդու հաշվով՝ 120կգ/տ

n – աշխատողների թիվն է

$$M=59*120= 7080\text{կգ/տ կամ } 19.4 \text{ կգ/օր}$$

Շինարարությունը տևելու է 6 տարի, հետևաբար 6 տարվա ընթացքում կենցաղային աղբի ծավալը կլինի՝

$$M=7080*6= 42480 \text{ կգ}$$

Շինարարության փուլում թափոնների հնարավոր ազդեցությունները շրջակա միջավայրի վրա մեղմելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքների ընթացքում շինարարական հրապարակը և հարակից տարածքը զերծ է պահվելու թափոնների կուտակումներից,
- շինարարական հրապարակում առանձնացվել է շինարարական և կենցաղային աղբի նախնական կուտակման վայրը,
- շինարարական թափոնները հնարավորինս կտեսակավորվեն/կառանձնացվեն մետաղները, փայտերը և այն ամենը ինչը հնարավոր կլինի վերաօգտագործել շինարարական աշխատանքների ընթացքում և մնացած մասը կտեղափոխվի հատկացված վայր,
- կառուցապատման փուլում կենցաղային աղբը հավաքվելու է աղբահավաք տարողությունների մեջ և հեռացվելու է տարածքից մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով,
- բացառվելու է կենցաղային աղբի այրումը,

- շինադրի և քանդված հանված հողային զանգվածների տեղափոխումը դեպի հատկացված վայր կատարվելու է փակ ծածկ ունեցող բեռնատարներով,
- բացառվելու է ադրի նախնական կուտակումը շփիրապարակից դուրս՝ այլ բնակելի և հասարակական տարածքներում,
- շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում՝ տարածքից հեռացնելով բոլոր տեսակի շինարարական նյութերի մնացորդները:

Շինարարության, ինչպես նաև շահագործման փուլերում կենցաղային ադրի հեռացումը տարածքից իրականացվելու է մասնագիտացված կազմակերպության կողմից ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

6.9 Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր են աշխատողների արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության հնարավոր ռիսկերի առաջացում՝ կապված հրդեհների, հեղուկ նյութերի արտահոսքի, աշխատողների վնասվածքների և տեխնիկատրանսպորտային միջոցների շահագործման ընթացքում հնարավոր վթարների հետ:

Շինաշխատանքները իրականացվելու են համաձայն ՇՆԵԿ-3-480* նորմերի:

Շինարարության փուլում աշխատողների աշխատանքի կազմակերպման և աշխատանքի անվտանգությունն ապահովվելու համար նախատեսվում է.

- մինչև աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդներն անցնելու են հրահանգավորում՝ ըստ աշխատանքի անվտանգության կանոնների,
- պահպանվելու է ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը՝ շինհրապարակում պահպանվելու են անվտանգության տեխնիկայի կանոնները՝ անցումները և վտանգավոր գոտիներում իրականացվելու են լրացուցիչ պաշտպանիչ միջոցառումներ (մետղական բազրիքների տեղադրում, ցանցապատում և այլն)
- պահպանվելու է ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2.8-0 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները,
- ապահովվելու է աշխատողների անվտանգությունը բարձրության վրա աշխատելիս,
- ստուգվելու և ատեստավորվելու են առասանիչ բանվորների գիտելիքները, տեղադրվելու են առասանման եղանակների և ձևերի նկարագրությամբ ցուցանակներ,

- աշխատողներն ապահովված են լինելու 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղերով, անհատական և պաշտպանական միջոցներով (արտահագուստ, դիմակ, կոշիկ և այլն),
- աշխատողների համար նախատեսվելու է սանիտարական և հանգստի պայմաններ (հանգստի սենյակ, հանդերձարան, լվացարան և այլն), որն ապահովված է լինելու անհրաժեշտ կահավորանքով (լվացարան, աթոռ, սեղան, ջեռուցիչ և այլն),
- շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրվելու են աշխատանքային պայմանների, հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ՝ տեղեկատվական և հակահրդեհային վահանակներ, վտանգն ազդարարող տեսողական պաստառներ, ճանապարհային երթևեկության, ինչպես նաև կողմնակի անձանց մուտքն արգելող նշաններ,
- վերահսկվելու է աշխատող սարքավորումների պիտանելիությունը, բացառվելու է գործնետության վայրում խոտանված բեռնիչ սարքերի կուտակումները,
- վերահսկվելու է մեքենաների երթերը, հաջորդականությունը, բացառվելու են մեքենաների կուտակումները,
- նվազագույնի են հասցվելու ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը՝ հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով,
- բացառվելու է ավտոամբարձիչի սլաքի աշխատանքը՝ սահմանազատված սահմանից դուրս,
- բեռնման-բեռնաթափման աշխատանքների ժամանակ օգտագործվող բեռնամբարձիչ մեքենաները, բեռնաբեռնիչ սարքերը պետք է համապատասխանեն պետական ստանդարտների կամ տեխնիկական պայմանների պահանջներին,
- տեղադրվելու են լրացուցիչ լուսավորման սարքեր՝ շինհրապարակի լուսավորության համար,
- շինհրապարակի լուսավորությունը պետք է ապահովի հավասարաչափ՝ լուսավորության 2 լյուքսից ոչ պակաս,
- շենքի ներսում եռակցման և ներկման աշխատանքները կատարվելու են օդափոխության պայմաններում, կատարվելու են հոսանքատար մասերի մեկուսացում,
- վարվելու են տեխնիկական հսկողության ամփոփիչ և անհատական մատյաններ՝ տեխնիկական վերահսկողության իրականացման համար,
- շինհրապարակի որակի, անվտանգության կանոնների պահպանումն իրականացվելու են 2020թ. հուլիսի 2-ի ՀՀ կառավարության նիստի N87 արձանագրության պահանջներին համապատասխան, աշխատողներն ունենալու են համապատասխան բանվորական արտահագուստ,

- պահպանվելու է աշխատողների միջև սոցիալական հեռավորությունը, հակակովիդային միջոցառումների իրականացման տեսանկյունից:

Շահագործման փուլ.

Շահագործման փուլում բնակելի համալիրն ապահովված է լինելու հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի տեղաշարժվելու համար անհրաժեշտ պայմաններով՝ ՀՀՇՆ 1/-11.07.01-2006 շինարարական նորմերին համապատասխան:

Մասնավորապես՝

- բնակելի համալիրն ապահովված է լինելու բնակչության սակավաշարժ խմբերի տեղաշարժվելու պահանջմունքին հարմարեցվող ունիվերսալ, շարժական տարրերով,
- վերգետնյա և ստորգետնյա անցումներն ապահովված է լինելու թեքահարթակներով,
- մուտքը տարածք կահավորված է լինելու տարածքի վերաբերյալ բնակչության սակավաշարժ խմբերի տեղաշարժվելու մատչելի տեղեկատվության տարրերով:

6.10 Էներգախնայողություն և Էներգաարդյունավետություն

Բնակելի համալիրի նախագծային լուծումները կատարվելու են հիմք ընդունելով ՀՀ կառավարության 12.04.2018թ N 426-Ն որոշմամբ սահմանված պահանջները՝ էներգախնայողության և էներգաարդյունավետության ապահովմանն ուղղված միջոցառումներին համապատասխան, ներառելով՝ ջեռուցման, տաք ջրամատակարարման, օդափոխման, լուսավորության համակարգերը:

Բնակելի համալիրի էներգաարդյունավետության համապատասխանության գնահատման համար պետք է կիրառվեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 16-ի N 56-Ն որոշմամբ սահմանված է և (կամ) Զ1 ընթացակարգերի պահանջները:

Համաձայն նույն որոշման IX բաժնի 31 կետի՝ շենքերը շահագործման հանձնելուց կամ շուկա հանելուց առաջ պետք է ներկայացվեն սույն կանոնակարգով սահմանված էներգաարդյունավետության պահանջներին համապատասխանության գնահատման՝ «Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան: Նույն բաժնի 34 կետում միաժամանակ նշվում է՝ էներգաարդյունավետության սերտիֆիկատը տրամադրվում է էներգետիկ փորձաքննության (աուդիտ) հիման վրա, որը ներառում է էներգաարդյունավետությունն օպտիմալ կերպով բարելավելու վերաբերյալ առաջարկություններ՝ բացառությամբ այն դեպքի, երբ գործող էներգաարդյունավետության պահանջների համեմատությամբ այդ բարելավումը նպատակահարմար չէ:

Շենքերի ջեռուցման, օդափոխման համակարգերի, ինչպես նաև շենքերը պատող կոնստրուկցիաների էներգետիկ փորձաքննությունը (աուդիտ) իրականացվելու է Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 31-ի N 1399-Ն որոշմամբ հաստատված պահանջներին համապատասխան:

Հետևաբար շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի փորձաքննության փուլում (ծանուցման փաթեթ) էներգաարդյունավետության սերտիֆիկատի ներկայացման պահանջը պարտադիր չէ:

Նոր կառուցվող բնակելի համալիրը և դրանց պատող կոնստրուկցիաները նախատեսվում է կառուցել ըստ նշված կանոնակարգի (N 426-Ն որոշում) IV գլխի պահանջների՝ հաշվի առնելով՝ Հայաստանի Հանրապետության բնակլիմայական պայմանները, սենքերում համապատասխան միկրոկլիմային ներկայացվող, Հայաստանի հանրապետությունում գործող նորմատիվա-տեխնիկական փաստաթղթերով սահմանված պահանջները.

Բնակելի համալիրի էներգաարդյունավետության և էներգախնայողության ապահովման նպատակով շենքերը կկառուցվեն.

- շենքի արտաքին պատերը պատվելու են նորմավորված, հրակայուն և անջրաթափանց, գոլորշակայուն և գոլորշամեկուսիչ նյութերով, ջերմամեկուսացվելու պենոպլեկսով,
- կատարվելու է դեկորատիվ սալիկապատում՝ ջերմամեկուսիչ շերտի ընտրությամբ, ելնելով բնակավայրի ջերմային ֆոնի առանձնահատկություններից,
- շենքերի միջտարածքային և բնակիչների կողմից օգտագործվող ընդհանուր մուտքերն ու ելքերը լինելու են ջերմամեկուսիչ և հերմետիկ փակվող դռներով և պատուհաններով,
- լուսավորությունը կատարվելու է լեդ տեսակի լամպերով:
- Շենքերի տանիքներում տեղադրվելու են արևային էներգիայի վահանակներ, որի արտադրված էլեկտրաէներգիան օգտագործվելու է շենքերի կարիքների ներքին սպառման և ընդհանուր տարածքների լուսավորության ապահովման համար

Բնակելի համալիրը, ներառյալ ստորգետնյա հարկերը (ապաստարան) կահավորելիս առաջնորդվելու են ՀՀ կառավարության 12.04.2018թ N426-Ն որոշմամբ սահմանված պահանջներով,

- արտաքին լուսավորության, օդափոխության, ծխահեռացման համակարգերով, հակահրդեհային միջոցներով՝ կրակմարիչներով,
- էլեկտրամատակարարման և ծխահեռացման փականների ավտոմատ անջատիչներով, օդափոխության, հակածխային օդափոխության արտաձման համակարգերով,

- ջերմամեկուսիչ, օդափոխիչ, էներգահինայող բազմաթիվ այլ սարքավորումներով:

6.11 Պատմամշակութային և բնության հուշարձաններ

Գործունեության ենթակա և մոտակա տարածքներում բացակայում են պատմամշակութային արժեք ունեցող պատմամշակութային և բնության հուշարձանները: Կառուցապատման ենթակա տարածքն արդեն մասնակի կառուցապատված է և չի առնչվում Աշտարակ քաղաքում գոյություն ունեցող մշակութային հուշարձանների, ինչպես նաև հատուկ պահպանվող տարածքների հետ:

Ուստի հնարավոր անբարենպաստ ազդեցություններ վերջիններիս վրա չի նախատեսվում:

Միաժամանակ, եթե շինարարական աշխատանքների ընթացքում մշակութային կամ հնագիտական ժառանգության որևէ միավոր է բացահայտվել, պետք է դադարեցնել աշխատանքները և տեղեկացնել ԿԳՄՄՆ: Շինարարական աշխատանքները չեն կարող վերսկսվել մինչև պատահական գյուտը չհետազոտվի հնագետի կողմից և ԿԳՄՄՆ -ի կողմից չտրվի գրավոր թույլտվություն: Կապալառուն պարտավոր է ծանոթ լինել ԿԳՄՄՆ -ի պատահական գյուտերի ընթացակարգին և պայմանագրով պետք է սահմանվի այդ ընթացակարգի խիստ հետևումը:

6.12 Սոցիալական ազդեցություններ

Բնակելի համալիրի շինարարության ընթացքում առաջանում են փոշու և դիզելային վառելիքի այրման արգասիքներ, որոնք վտանգ են ներկայացնում բնակչության առողջության համար: Այդ ընթացքում աղմուկի մակարդակի ավելացումը նույնպես բացասաբար կարող է անդրադառնալ բնակչության առողջության համար:

Եթե եկության ինտենսիվացումը հնարավոր անհարմարություններ կարող է ստեղծել հարակից փողոցների մոտակայքում բնակվող բնակչության, այնպես էլ գոյություն ունեցող ճանապարհով երթևեկության համար:

Վեշերոնշյալ անբարենպաստ ազդեցությունները կրելու են ժամանակավոր բնությ` լինելու են տեղայնացված և համապատասխան կառավարման պլանով նախատեսված միջոցառումների պատշաճ իրականացման դեպքում հնարավոր կլինի նվազեցնել, կանխարգելել և/կամ մեղմացնել դրանք:

Մինևս նույն ժամանակ ակնկալվում է շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում, որ դրական ազդեցությունները կլինեն ավելի շատ և երկարատև, օրինակ`

- Շինարարական աշխատանքների համար անհրաժեշտ անձնակազմի զգալի մասը կհավաքագրվի տեղի բնակչությունից, ինչը դրական ազդեցություն կունենա բնակչության կենսամակարդակի վրա:

- Աշխատանքների ընթացքում կգարգանան տեղի ենթակառուցվածքները, կլուծվեն մի շարք սոցիալական խնդիրներ:
- բնակելի համալիրի կառուցումը նպաստելու է բնակչության բնակարանով ապահովվածությանը:
- Շահագործման ընթացքում բնակելի համալիրի տարածքում նոր հասարակական օբյեկտների առկայությունը հնարավորություն կնվճեի նոր աշխատատեղերի բացմանը:

6.13 Լանդշաֆտ

Գործունեության իրականացումը չի առաջացնելու լանդշաֆտի լրացուցիչ ծանրաբեռնվածություն, քանի որ այն կառուցվելու է գոյություն ունեցող կառուցապատման տարածքում: Նախատեսվող գործունեության իրականացման տարածքներում (ազդեցության գոտում) լանդշաֆտի, բուսական ու կենդանական տեսակների, հողային և ջրային ռեսուրսների վրա հնարավոր վնասակար ազդեցություններ չեն ակնկալվում: Նախատեսված շինարարական աշխատանքների ազդեցությունը տարածքի վրա կլինի նվազագույն՝ կրելով սահմանափակ և կարճատև բնույթ:

Դրանք հնարավոր կլինի նվազեցնել շինարարության փուլում՝ բնապահպանական կառավարման պլանով նախատեսված միջոցառումների արդյունքում:

Նախատեսվող բնակելի համալիրը ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն է:

- Շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում.
- շինարարական սարքավորումներն ապամոնտաժվելու են,
- շինարարական հրապարակը մաքրվելու է թափոններից, վերականգնվելու է տարածքը,
- կատարվելու են գործունեության ենթակա տարածքի հարթեցման, բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ:

6.14 Բարեկարգում և Կանաչապատում.

Համալիրի կառուցման ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում, թափոնների և վտանգավոր նյութերի հեռացում, բոլոր ժամանակավոր կառույցների ապամոնտաժում, ճանապարհների կարգաբերում :

Կառուցապատման աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է նաև գործունեության ենթակա ազատ տարածքի՝ 15592.0 քմ մակերեսի վրա կատարել կանաչապատման

աշխատանքներ՝ ներբակային գոտում, հարակից տարածքներում և ճանապարհի եզրերին: Որպես կանաչապատման նախագծի հիմք հանդիսանում են.

- պատվիրատուի կողմից տրամադրվող գլխավոր հատակագիծը
- Աշտարակի համյանքապետի կողմից հաստատված ճարտարապետահատակագծային առաջադրանքը:

Համաձայն ճարտարապետահատակագծային առաջադրանքի կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին կազմում է 40 % և ավելի:

Համաձայն կանաչապատման նախագծի, ընդհանուր կանաչապատման մակերեսը 0,00 հեկտար կազմում է 15592.0 մ² (50.44 %): Նախատեսվում է նաև լրացուցիչ կանաչապատման աշխատանքներ տանիքային կանաչապատման եղանակով, ինչպես նաև շենքերի բակային տարածքներում վերգետնյա ավտոկայանտեղերի հատվածում կանաչապատման իրականացում գեոցանցի եղանակով:

Նախագծով նախատեսվող կանաչապատման աշխատանքները կիրականացվեն առաջնորդվելով «Բնակավայրերի կանաչ գոտիների չափերին և տեսակային կազմին ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 30.10.2008թ N 1318-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 08.02.2018 թվականի N 108-Ն որոշման դրույթներով: Ուսումնասիրելով տեղանքը և խորհրդակցելով դենդրոլոգի հետ, առաջարկվում է տեղադրել ստորև նշված բույսերի տեսականին, համապատասխան քանակներով (տես աղյուսակ 9)

Աղյուսակ 9

	Տեսակ	Քանակ, հատ	Կենսաձև	Ծագում	Դեկորատիվ ցուցանիշներ		
					Բարձրություն, մ	Սաղարթի ձև, տրամագիծ (մ)	Վերաբերմունքը խոնավության հանդեպ
N	Ծառատեսակներ						
1	Սոսի արևելյան <i>Платан восточный</i>	17	Ծ _տ	աբորիգեն	20-25	Կլորավրանաձև, 6-7	խոնավասեր
2	Եղնի արծաթափայլ <i>Ель колючая сизая</i>	3	Ծ _{ամ}	ներմուծված	15-18	Սրածայր կոնաձև, 4-5	չորադիմացկուն
3	Սոճի դրիվյան <i>Сосна крымская</i>	4	Ծ _{ամ}	աբորիգեն	18-20	Բրգաձև, 5-6	չորադիմացկուն
4	Կաղնի շագանակատերև <i>Дуб каштанолистный</i>	4	Ծ _տ	ներմուծված	12-15	Վրանաձև, 5-6	խոնավասեր
5	Զիակակ սովորական <i>Конский каштан обыкновенный</i>	14	Ծ _տ	ներմուծված	15-20	Գնդաձև, 6-7	խոնավասեր
6	Սոֆորա ճապոնական <i>Софора японская</i>	4	Ծ _տ	ներմուծված	15-18	Գնդաձև, 5-6	չորադիմացկուն
7	Թուլա սյունաձև <i>Туя колонновидная</i>	2	Ծ _{ամ}	ներմուծված	15-18	Սյունաձև, 1,5-2	չորադիմացկուն

8	Բարդի բոլլեի Тополь болле	14	Ծ _{in}	ներմուծված	20-25	Ձված, 2-3	խոնավասեր
9	Դրախտածառ Скумпия	25	Ծ _{in}	արքրիզեն	4-6	Գնդած, հովանոցած, 3-4	չորադիմացկուն
10	Թխկի սրտերև Клен остролистный	28	Ծ _{in}	ներմուծված	12-15	Լայն ձված, 4-5	խոնավասեր
11	Շատալլա օվալած Катальпа яйцевидная	24	Ծ _{in}	ներմուծված	8-10	Վրանած, 5-6	խոնավասեր
12	Ռոբինիա կեղծ ակացիա (գնդած ակացիա) Робиния лжеакация	24	Ծ _{in}	ներմուծված	3-4	Գնդած, 3-4	չորադիմացկուն
13	Հուդաշածառ կանադական Иудино дерево (Церцис) канадски	8	Ծ _{in}	ներմուծված	6-8	Վրանած, 3-4	չորադիմացկուն
14	Լարոնոնուս անագիրատերև (Ոսկե անձրև) Бобовник анагиролистный	10	Ծ _{in}	ներմուծված	4-5	Ցրված գնդած, 2-3	խոնավասեր
Թփատեսակներ							
1	Գհիի կազակական Можжевельник казацкий	4	Թ _մ	արքրիզեն	1,5-2		չորադիմացկուն

2	Ասպիրակ վանհուտի <i>Таволга вангутта</i>	3	Թ _տ	ներմուծված	1.5-2		չորադիմացկուն
3	Միրիական վարդ <i>Гибискус сирийский</i>	5	Թ _տ	ներմուծված	5-6		խոնավասեր
4	Ֆորսիցիա միջանկյալ <i>Форсиция промежуточная</i>	7	Թ _տ	ներմուծված	2-3		չորադիմացկուն
5	Տոսախ մշտադալար* <i>Самшит вечнозеленый</i>	3635	Թ _մ	ներմուծված	0,4-0,8		խոնավասեր
6	Կիպրոս սուրբական* կարմրատերև <i>Б. обыкновенный пурпуrolистный</i>	890	Թ _տ	ներմուծված	0,6-1,2		խոնավասեր

Ծ_{ամ} - Ծառ ասեղնատերև մշտադալար

Ծ_{տտ} - Ծառ ասեղնատերև տերևաթափ

Ծ_տ - Ծառ տերևաթափ

Թ_տ – թուփ տերևաթափ

Թ_մ – թուփ մշտադալար

*- Տոսախը և Կիպրոսը տնկվելու են պատնեշային ցանկապատման համար, 1 գծամետրի վրա նախատեսվում է տնկել 5 հատ թուփ, Կիպրոս՝ 178 գծմ, Տոսախ՝ 727 գծմ:

Տարածքի նախապատրաստական աշխատանքները

Նախքան ծառատնկման աշխատանքների սկսելն անհրաժեշտ է կանաչապատվող տարածքում իրականացնել հետևյալ ազրոմելիորատիվ միջոցառումները.

- Ոռոգման համակարգի անցկացում,
- Համաձայն կանաչապատման նախագծի համարակալված ցցափայտերի օգնությամբ ծառերի ու թփերի փոսերի տեղի նշահարում,
- Ծառերի համար 1մ խորությամբ և 50սմ լայնության փոսերի պատրաստում ,
- Թփերի համար 50-60սմ խորությամբ և 40սմ լայնության փոսերի պատրաստում,
- Բոլոր փոսերի մոտ համարժեք ծավալի հողախառնուրդի կուտակում. պատրաստված 3 բաժին սևահողից, 1 բաժին կարմիր ավազից, 1 բաժին տորֆահողից և 0.5 բաժին փտած գոմաղբից, վրան ավելացնել մուլչ:

Ազրոտեխնիկական միջոցառումների ավարտից հետո խորհուրդ է տրվում նշված տարածքում ծառատունկն իրականացնել ուշ աշնանը կամ վաղ գարնանը: Տնկանյութը ծառերի դեպքում պետք է լինի 1.5-2.0մ, թփերի դեպքում՝ 0,5-0,8մ, պատնեշային թփերի (տոսախ, կիպրոս) դեպքում՝ 0,3-0,5մ: Տնկանյութը կարելի է ձեռք բերել անտառային և դեկորատիվ տնկարաններից: Որպեսզի պաշտպանիչ կանաչ գոտում խոտածածկ առաջանա նախատեսվում է ցանել ռեյգրաս տեսակի խոտի սերմ՝ 1 ք.մ.-ում 0,033 կգ: Նախատեսվում է նաև հիմնել ծաղկանոցներ 350 ք.մ տարածքում, 1ք.մ-ում տնկելով թզուկ վարդի 6 թուփ: Ծառատնկման հաջորդ 3 տարիներին խորհուրդ է տրվում վեգետացիայի ընթացքում 2-3 անգամ իրականացնել խնամքի (քաղհան, փխրեցում) աշխատանքներ, անհրաժեշտության դեպքում նաև վնասատուների նկատմամբ թունաքիմիկատներով կամ կենսաբանական պայքարի միջոցառումներ: Կանաչապատման հատակագիծը և սխեման ներկայացված է Հավելված 9-ում:

Նախատեսվում է կազմակերպված ոռոգման ցանց: Տարածքը նախատեսվում է ոռոգել ցնցուղային սարքավորումներով, որոնք միմյանց հետ կապվում են ստորգետնյա պոլիէթիլենային խողովակներով: Տարածքը ոռոգման ջրով ապահովելու վերաբերյալ առկա է «Արագածոտն» ՋՕԸ նախնական համաձայնությունը (Հավելված 10)

Կանաչ տարածքի ոռոգման ջրապահանջի հաշվարկ

Կանաչապատ տարածքի 1 քմ-ի մեկ ոռոգման համար ջրի ծախսի նորման կազմում է 4-6 լ/քմ:

Տեղանքի կլիմայական պայմանների ն համապատասխան ընդունում ենք 5լ/քմ արժեքը.

Սիզամարզի ոռոգում՝ $n6 = 0.005$ խմ/քմ

Ոռոգման համար ջրապահանջը որոշվում է՝

$$W_{u.3} = (n6 \times S) \times K \times t$$

որտեղ՝ S – ոռոգվող տարածքի մակերեսն է, սիզամարզի և ծաղկանոցների գումարային մակերեսը՝ $S1 = 15592.0$ քմ,

K – ռոտզման օրական հաճախականությունն է, $K = 1$

t – ռոտզման օրերի պլանավորված թվաքանակն է, $t = 155$ օր

$W u.3 = (0.005 \times 15592) \times 1 \times 155 = 12\ 083.8$ խմ/տարի

7 ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ և ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ

Ռիսկերի նվազեցումը կարելի է ապահովել իրականացնելով մի շարք բնապահպանական միջոցառումներ, որոնք ամփոփվել են բնապահպանական կառավարման պլանում և կազմակերպել իրականացվող աշխատանքների մոնիթորինգ:

ԲԿՊ-ն իրենից ներկայացնում է շրջակա միջավայրի, մարդու առողջության ու շինարարների անվտանգության վրա հնարավոր բացասական ազդեցությունների նկարագրությունը, որոնք հնարավոր են ծրագրի իրականացման նախագծման, շինարարության և շահագործման փուլերում և դրանք կանխող, մեղմացնող միջոցառումների ցանկը:

ԲԿՊ պարունակում է նախատեսվող գործունեության բոլոր փուլերի ընթացքում (նախագծում, շինարարություն, շահագործում) կանխատեսված հնարավոր անցանկալի բացասական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու միջոցառումները, ինչպես նաև մոնիտորինգի գործողություններ՝ ստուգելու համար շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի համապատասխանությունը պլանավորված մեղմացնող միջոցառումներին:

Հիմնական կապալառուն պատասխանատու է լինելու ԲԿՊ-ում ներառված միջոցառումների իրականացման համար և իր հերթին համապատասխան պայմանագրային պարտավորություններ է նախատեսելու ենթակապալառուի հետ իր պայմանագրերում:

ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարումը և դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով շինարարության կապալառուի կողմից կիրականացվի կանոնավոր մոնիթորինգ, որի շրջանակներում նախագծային կազմակերպության բնապահպանության մասնագետի կողմից՝ յուրաքանչյուր փուլի մասով, կիրականացվեն մոնիթորինգի ստուգայցեր՝ երկու շաբաթը մեկ անգամ (երկու անգամ մեկ ամսվա ընթացքում): Արդյունքները գրանցվելու են մոնիտորինգի ստուգաթերթիկում:

Բնապահպանական կառավարման պլանը, ընդգրկվելու է ծավալաթերթերում և որպես անբաժանելի բաղադրամաս կցվելու է պայմանագրային փաստաթղթերին:

Շինարարության աշխատանքների հետևանքով առաջացած շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված բնապահպանական միջոցառումների, ինչպես նաև մշտադիտարկումների իրականացման համար գումարային ծախսերը կկազմեն **21մլն 350հազ ՀՀ դրամ**:

8 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

Ծրագրի Գործողությունները	Հնարավոր Ազդեցությունները	Առաջարկվող մեղմացնող Միջոցառումները	Մեղմացնող միջոցառման պատասխանատուն	Մոնիթորինգի պատասխանատուն
<p>Նախագծային փաստաթղթերի պատրաստում</p> <p>Շինարարական Հրապարակի Բոլոր գործողությունները</p> <p>Աշխատողների, ինչպես նաև շինհրապարակի մերձակայքում բնակվող մարդկանց անվտանգություն</p>	<p>Բացասական ազդեցություններ՝ շինարարության փուլում, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել աշխատանքային նախագծում,</p> <p>ԲԿՊ-ի բնապահպանական Պահանջների մասին տեղեկատվության պակասը կարող է հանգեցնել շրջակա միջավայրի վատթարացման:</p>	<p>Աշխատանքային նախագիծը անհրաժեշտ է մշակել հաշվի առնելով ԲԿՊ-ում պլանավորված մեղմացնող միջոցառումները, որոնք պետք է ներառված լինեն նաև պայմանագրային փաստաթղթերում:</p> <ul style="list-style-type: none"> - Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունների/համաձայնությունների ձեռք բերում - Տարածքում առկա ինժեներական ենթակառուցվածքների անջատման, կամ տեղափոխման վերաբերյալ թույլտվության ձեռք բերում, սեփականատիրոջ հետ համաձայնեցում Խստագույն պահպանել ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները - Անհրաժեշտ է նշանակել բնապահպանական/սոցիալական, աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով պատասխանատու կլինի շինհրապարակում իրականացվող աշխատանքների բնապահպանական, սոցիալական, աշխատանքի անվտանգության պահանջների իրականացման համար: - Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները, համայնքը և բնակիչները պետք է նախագգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ - Աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան բնակիչների և շրջակա տարածքների վրա: - Շինարարական աշխատանքներում ներգրավված բոլոր մարդիկ պարտադիր կանցնեն բնապահպանական, սոցիալական, առողջության և անվտանգության վերաբերյալ 	<p>Շինարարության կապալառու</p> <p>“Աստղիկ 21” ՓԲԸ</p> <p>Շինարարության կապալառու</p>	<p>Տեխնիկական վերահսկող</p> <p>Աշտարակի համայնքապետարան “Աստղիկ 21” ՓԲԸ</p>

		<p>դարնթացներ, կստանան համապատասխան հրահանգավորում:</p> <ul style="list-style-type: none"> - Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ) - Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ: 		
<p>Հողային աշխատանքներ, շինանյութերի փոխադրումներ Այլ շինարարական աշխատանքներ</p>	<p>Շին տեխնիկայի շահագործումից փոշու և վնասակար նյութերի արտանետումներ;</p>	<ul style="list-style-type: none"> - Օդի աղտոտման և փոշու կառավարում Օդի որակի չափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքների դեպքում: - Անհրաժեշտ է իրականացնել շին հրապարակի պարբերական ջրցանում փոշու արտանետումները նվազագույնի հասցնելու նպատակով; - Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը և հնարավորինս ծածկել կուտակված նյութերը փոշու տարածումից խուսափելու համար; - Անհրաժեշտ է սահմանափակել մեքենաների արագությունը փոշու քանակը նվազեցնելու նպատակով; - Շինարարական աշխատանքների ընթացքում հատուկ տարողություններ և քանդվախ հանված հողային զանգվածների տեղափոխման վայրեր կնախատեսվեն - Աշխատանքների ընթացքում կառաջանան քանդված հանված հողային զանգվածներ, որոնք անմիջապես կտեղափոխվեն համապատասխան հատկացված վայրեր և չեն առաջացնի կուտակումներ - Շինարարական հրապարակից դուրս գալիս նախատեսվում է ավտոտրանսպորտային միջոցների անվադողերի լվացում - Սորուն շինարարական նյութերի և քանդված հանված հողային զանգված տեղափոխումը պետք է իրականացնել փակ ծածակով մեքենաներով: 	<p>Շինարարության կապալառու</p>	<p>Տեխնիկական վերահսկող, Աշտարակի համայնքապետարան “Աստղիկ 21” ՓԲԸ</p>

		<ul style="list-style-type: none"> - Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով - Շինարարական տրանսպորտային միջոցների պարապուրդ շինհրապարակում չի թույլատրվի 		
Թափոնների կառավարում	<p>Շին աղբի տեղադրում անհամապատասխան վայրերում;</p> <p>Վառելիքի, յուղի կամ այլ թունավոր նյութերի արտահոսքի պատճառով Հնարավոր է վտանգավոր նյութերի թափանցում հողի մեջ:</p>	<ul style="list-style-type: none"> - Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար: - Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված վայրեր: - Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները կրկնակի օգտագործել - Բացառել աղբի այրումը շինարարական հրապարակներում կամ դրա հարակից վայրերում 	Շինարարության կապալառու	<p>Տեխնիկական վերահսկող,</p> <p>Աշտարակի համայնքապետարան “Աստղիկ 21” ՓԲԸ</p>
Ջրային ռեսուրսների պահպանություն	Մակերևութային հոսքերի աղտոտում	<ul style="list-style-type: none"> - Մինչև աշխատանքների սկիզբը կատարել միացումներ քաղաքային ջրատարին և կոյուղուն 	Շինարարության կապալառու	Աշտարակի համայնքապետարան
Աղմուկի և թրթռումների կառավարում	Շին աշխատանքների արդյունքում աղմուկի և թրթռումների մակարդակի աճ:	<ul style="list-style-type: none"> - Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակներիչափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում: - Անհրաժեշտ է խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը; 	Շինարարության կապալառու	Աշտարակի համայնքապետարան “Աստղիկ 21” ՓԲԸ

		<ul style="list-style-type: none"> - Աղմկահարույց աշխատանքները անհրաժեշտ է հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին: - Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով: - Անհրաժեշտ է բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը: 		
<p>Շինհրապարակի վերականգնում</p>		<ul style="list-style-type: none"> - Շինհրապարակից անհրաժեշտ է հեռացնել շինարարության հետ ապված բոլոր պարագաները, այդ թվում՝ չօգտագործված նյութերը, թափոնները, մեքենաները, սարքավորումները, ցանկապատումը և այլն; - Անհրաժեշտ է վերականգնել բոլոր վնասված կամ տեղահանված կոմունիկացիաները; - Մաքրել շինհրապարակը կենցաղային և այլ աղբից և հեռացնել յուղի, վառելիքի արտահոսքի հետքերը; - Մշակված ընդունման-հանձնման ակտի ստուգաթերթիկի բոլոր պահանջները; - Կատարել կանաչապատման/բարեկարգման աշխատանքները՝ համաձայն կանաչապատման նախագծի բարեկարգման պլանների; Ձեռնարկել տնկված ծառերի, թփերի և խոտածածկի պահպանումը և մոնիտորինգը՝ բուսականության բարձր կապահովմանը աճն ապահովելու համար 	<p>Շինարարության կապալառու</p>	<p>Աշտարակի համայնքապետարան</p>

9 ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ/ ՊԼԱՆ

Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Որտեղ իրականացնել	Ինչպես իրականացնել	Ժամանակամիջոց	(ն՞վ է իրականացնում մոնիթորինգը)
Շինանյութերի մատակարարում	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից	Մատակակարի հիմնարկում կամ պահեստում	Փաստաթղթերի ստուգում	Մատակարարման պայմանագրերը կնքելու ընթացքում	Կապալառու «Աստղիկ 21» ՓԲԸ,
Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	<ul style="list-style-type: none"> • Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում • Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում հերթականության ապահովմամբ • Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում 	Շինհրապարակ Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ	Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	«Աստղիկ 21» ՓԲԸ, Աշտարակի համայնքապետարան
Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում	<ul style="list-style-type: none"> • Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս Աշտարակ քաղաքում գործող մասնագիտացված կետերում • Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում 	Շինհրապարակ	Գործընթացների գործունեության ստուգում	Մեխանիզմների շահագործման ընթացքում	Կապալառու Աշտարակի համայնքապետարան «Աստղիկ 21» ՓԲԸ,
Հողային աշխատանքներ	<ul style="list-style-type: none"> • Հանված հողային զրոնտները պահեստավորում են թույլատրված վայրում • Անհրաժեշտության դեպքում ետլիցք, ավելցուկի օգտագործում տարածքի բարեկարգման նպատակով 	Շինհրապարակ	Գործընթացների ստուգում	Հողային աշխատանքների ընթացքում	«Աստղիկ 21» ՓԲԸ Կապալառու քաղաքապետարան

Վտանգավոր նյութերի և թափոնների կառավարում	Վառելիքի, յուղերի և այլ թունավոր նյութերի պատահական կամ մշտապես տեղի ունեցող արտահոսքեր	Շինհրապարակ	Շինհրապարակի զննում	Շինարարության ընթացքում	Կապալառու Աշտարակի համայնքապետարան “Աստղիկ 21” ՓԲԸ
Շինարարական հրապարակի բարեկարգում	<ul style="list-style-type: none"> • Շինարարական հրապարակի ապամոնտաժում, և տեղանքի բարեկարգում • Շինհրապարակի վերջնական մաքրում, տարածքի բարեկարգում և վերականգնում 	Շինարարական հրապարակ, ժամանակավոր պահեստներ	Ստուգման գործընթացներ	Շինարարության ավարտական փուլ	Կապալառու Աշտարակի համայնքապետարան “Աստղիկ 21” ՓԲԸ
Աշխատանքի անվտանգություն	<ul style="list-style-type: none"> • Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով • Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն 	Շինհրապարակ	Ստուգման գործընթացներ	Աշխատանքների ողջ ընթացքում	Կապալառու Աշտարակի համայնքապետարան “Աստղիկ 21” ՓԲԸ
Շինհրապարակի վերականգնում, կանաչապատում և տարածքի բարեկարգում	<ul style="list-style-type: none"> • Շինհրապարակը մաքրված է, նյութերը և թափոնները հեռացված են • բոլոր մակերեսները, այդ թվում ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգնված են, • շինհրապարակի տարածքը բարեկարգված և կանաչապատված են, ապահովված է ծառերի թփերի և այլ բուսականության նորմալ աճ 	Տեղամասեր Կատարած Ստուգայցեր Կանաչապատվող բոլոր տեղամասերը	Շինհրապարակի զննում Ստուգայցեր	Շինարարության ավարտին Շինարարության ավարտից սկսած մինչև ծառերի աճի կաշտողականության ապահովումը	Կապալառու Աշտարակի համայնքապետարան “Աստղիկ 21” ՓԲԸ Կապալառու Աշտարակի համայնքապետարան “Աստղիկ 21” ՓԲԸ

10 ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- ՀՀ Օրենք «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին», 2014 թ. Հունիսի 21:
- Շինարարական Կլիմայաբանություն 2011: ՀՀՇՆ II 7.01-2011ՀՀ քաղաքաշինության նախարարի 2011թ. Սեպտեմբերի 26-ի N167-Ն հրաման:
- ՀՀ Կառավարության որոշում N 1325-Ն «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին», 19 նոյեմբերի 2014 թ.:
- ՀՀ կառավարության N 862-Ա որոշում: Անհատույց սեփականության իրավունքով գույք հանձնելու և քանդման (ապամոնտաժման) աշխատանքներ կազմակերպելու մասին: 25 օգոստոս 2016, URL: <https://www.e-gov.am/gov-decrees/item/27593/>:
- Ավտոմոբիլային տրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի հաշվարկման մեթոդական ցուցումներ, Մոսկվա, Հիդրոմետհրատ – 1983:
- «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 սանիտարական նորմեր
- Արտակարգ իրավիճակների նախարարի 2021թ. մարտի 31-ի 372-Ն հրամանով հաստատված ՀՀ տարածքի սեյսմիկ վտանգի, սեյսմիկ գոտևորման քարտեզների և
- Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թ. դեկտեմբերի 28-ի թիվ 102-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ 20.04_ Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր»:
- ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկունության շինարարության նախագծման նորմեր»:
- ГОСТ 25100 – 82. “ Грунты. Классификация”.
- СНИП 2.02.02 – 82 «Основания зданий и сооружений”
- СНИП IV – 2 – 82 “Сборник. Земляные работы”
- ՀՀՇՆ 1 – 2.01-99 «Ինժեներական հետազոտություններ շինարարության համար:
- Հիմնական դրույթներ»
- ՀՀՇՆ II - 7.01-96 «Շինարարական կլիմայաբանություն
- ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգության» նորմերին
- ՇՆԵՎԿ III-IV.2008
- ՀՀՇՆ I-2.03-03 «ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱԴԱՍՏՐ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ քաղաքաշինության նախարարի 2003թ հունիսի 5-ի. 38-Ն հրաման:
- Քաղաքաշինության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ:

- Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն Քաղաքաշինության նախարարի հրաման (8 ապրիլի 2014):
- ՀՀ Քաղաքաշինության նախարարի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգը» (հրաման N44, 28 ապրիլի, 1998):
- ՇՆուԿ 3.01.01-85 (Շինարարության արտադրության կազմակերպում),
- ՇՆ 440-79:
- www.armstat.am
- <http://aragatsotn.mtad.am>
- www.arlis.am
